



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆՎՈՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. ԱՊԵՐԼԵՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՉՉԱԾՈՎԱԿԱՆ ՈՎՐԱ

ՀԱՄԲ



Ա. ՌՈՒԲԵՆ

331.82

n

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁԵԱԺՈՂՈՎԸ

A 4545

卷之四

ԶԵՂԵԿԱՏՈՒ ՅԵՎ ԶԵՐՆԱՐԿ ՍՏՈՐԻՆ ՊՐՈՖՖԵՇՆԵՐԻ
(ԴՐՄԱՐՏԵՂԿՈՄ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ) ՅԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ
ԱՇԽԱՏՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագրությամբ՝ Ս. ՍԵՄՅՈՒՆՈՎԻ
Ռուս. թարգմանեց՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՅԱՆ



ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՅԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, — Ե Ե Ր Ե Վ. Ռ. Ն., 1930

Հ. Ա 1177:

Դբառեպկար Ա 2718 (ը):

Տիրաժ 3000:

Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում:
Գառվել Ա 291:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներ
կազմակերպվում են այն բոլոր ձեռնարկություններում
ու հիմնարկներում, վորտեղ կան գործարկումներ կամ
տեղկոմմերու հանձնաժողովի հիմնական խնդիրն ե՝ տվյալ
ձեռնարկությունում կամ հիմնարկում աշխատողների
աշխատանքի պաշտպանությունը:

Բայց ումբը և ինչից պաշտպանել: Աշխատանքը
ինքնըստինքյան, լինի նա վարձու, թե վոչ վարձու,
աշխատողի համար իր մեջ շատ մնասակար ու վտան-
գավոր տարրեր ունի, յեթե չեն սլահվում աշխատան-
քի պաշտպանության վորոշ նորմաները: Նա, ով աշ-
խատում և վոչ թե վորպես վարձու աշխատավոր, այլ
անհատապես իր համար (անալինագործը, արտելի ան-
դամը), նա ևս ազատ չի աշխատանքի մնասակարու-
թյունից, ինչպես և վարձու բանվորը: Բանվորական
ժամերի յերկարացումը տնայնագործի վրա յել նույն-
պիսի մնասակար ազդեցություն ե ունենում, ինչպես և
վարձու բանվորի վրա: Ճիշտ այդպես ել, տնայնագոր-
ծին կամ արտելի անդամին ել սպառնում են մեքե-
նալի ստրքին չլինելը կամ այն մնասակար նկութերը,
վորսնց նետ նա գործ պիտի ունենա իր աշխատանքի
ընթացքում: Սակայն տնայնագործն ինքն և պաշտ-
պանում իր աշխատանքը: Այսինչ վարձու աշխատա-
վորը յենթակա լի աշխատանքի մնաստկարությանն

այս կամ այն չափով, նալուծ աշխատանքի այն պար-
մաններին, վոր ստեղծում ե նրա համար վարձողը:
Արդյունաբերության վորոշ ճյուղերում ֆասակարու-
թյունն ավելի շատ ե (Ճյուղաբանները, հանգանորերը),
մյուսներում ավելի քիչ: Վարձողը միշտ աշխատում է
եժանացնել աշխատանքը՝ «ավելորդ» ծախսեր վոր-
քան կարելի է քիչ անել: Մասնավոր գործառերը
այդ ճանապարհով իր գրանն ե տռզեցնում:

Բոլորովին այլ գրություն ե պետական ձեռնարկու-
թյուններում: Պետական ձեռնարկություններն ստիպ-
ված են խնայել՝ յելնելով արտադրությունն եժանաց-
նելու անհրաժեշտությունից, վորով կեժանացնեն նաև
արտադրանքը: Արտադրանքի եժանացումը մեր խոր-
հրդային տնտեսության զարգացման գրավականն ե:
Սակայն, չի կարելի ասել, թե ամեն տեսակի խնայո-
ղությունն ել խելացի է և խսկապես ազդում է ար-
տադրության եժանացման վրա: Ամենամնասակար խնայ-
ողություններից մեկը հենց այն խնայողությունն է,
վոր արվում ե բանվորների աշխատանքի պաշտպա-
նության հաշվին: Բայց չե՞ վոր աշխատանքի պաշտ-
պանությունը միջոցներ ե պահանջում: Առանց միջոց-
ների հազիվ թե կարելի լինի բարելավել աշխատան-
քի պաշտպանությունը ձեռնարկության մեջ: Ճիշտ ե,
սակայն, վաղուց արդեն ապացուցված ե, վոր աշխա-
տանքի պաշտպանության գործի ճիշտ դնելը միայն
ոժանդակում ե աշխատանքի արտադրողականության
բարձրացմանը, այսինքն՝ խսկապես եժանացնում է
արտադրանքը: Տնտեսական բարձր մարմինների հրա-
հանգները ճիշտ են դն ահատել աշխատանքի պաշտպա-
նության նշանակությունը մեր տնտեսության համար:

Սակայն մեր բոլոր տնտեսավարներն ել միշտ բավարար չափով հաշվի չեն առնում այդ հանգամանքը: Նրանց մեջ կան այնպիսիները, վորոնք «եժանացնելու» և «խնայիլու» ձգտումով տարված՝ աշխատանքի պաշտպանությունը համարում են «վերադիր-անարտադրական» ծախս:

Մեր աշխատանքի պաշտպանության որենսդրությունը, ինարկե, չի բաժանում այդ հայացքները, նույնովիսի տեսակետ չունի: Աշխատանքի ժողով. Կոմիսարիատի մարմինները և գլխավորապես Աշխատանքի Տեսչությունը աշխատանքի պաշտպանության պահապահն են և խիստ կերպով հետեւում են, վորպեսզի կյանքում կիրապվեն աշխատանքի որենքները: Սակայն, դժվար թե Աշխատանքի Տեսչությունը մենակ, առանց բանվորական կազմակերպությունների ոգնության, կարողանար կտարել այն հսկալական աշխատանքը, վեր պահանջվում ե բանվորների ու ծառայողների աշխատանքի պաշտպանության մասին լեզած ըոլոր որենքները կյանքում կիրառելու վրա հսկելու գործում: Աշխատանքի պաշտպանության ասպարիզում հաջող աշխատանք կատարելու համար բավական չեն լավ որենքները, հրահանգներն ու աշխատանքի խիստ տեսչությունները: Այդ խնդրում առաջնակարգ դեր ե խաղում հենց իրենց՝ բանվորների ակտիվությունը: Առանց բանվորական մասսաների և նրանց գործարտեղկոմների ակտիվության դժվար ե հասնել աշխատանքի ճիշտ պաշտպանության:

Կապիտալիստական կարգերից մեզ ժառանգություն են մնացել կիսակործան գործարաններ ու ֆաբրիկաներ, ինչ մեքենաներ ու հին սարքավորում: Մեր ար-

դլունաբերութիւնն իր վերականգնման ընթացքում
արդեն ոգտագործել ե այն ամենը, ինչ-վոր ժառան-
գութիւնն եր մետք մեզ: Այժմ մենք նորանոր գոր-
ծարաններ ու ֆաբրիկաներ ենք կառուցում, վերա-
սարքավորում ենք հները: Մեր յերկիրն ավելի հաջող
կերպով ինդուստրացնելու համար մեր արդյունաբերու-
թիւնն ավելի և ընդարձակելու անհրաժեշտութիւնը
պահանջում ե մեզնից վերին աստիճանի խնայող լի-
նել մեր բոլոր ծախսերի մեջ: Սակայն այդ խնայողու-
թիւնն ընթացքում չպիտի մոռանալ, վոր աշխատանքի
պաշտպանութիւն գործի ճիշտ դրումը աշխատանքի
արտադրողականութիւնն բարձրացման և արտադրանքն
հժանացնելու միջոցներից մեկն ե հանդիսանում:

Աշխատանքի պաշտպանութիւնն գործը սերտորեն
կապված ե արտադրութիւնն ու ացիոնալացման հետ:
Շատ հաճախ արտադրութիւնն էին մեթոդները, հին
մեքենաները և աշխատանքի հին ձևերը շատ մնամա-
կար են լինում բանվորների կյանքի և առողջութիւնն
համար: Այդպիսի դեպքերում Աշխատանքի պաշտպա-
նութիւնն հանձնաժողովն իր աշխատանքի ընթացքում
սերտ համագործակցութիւնն պիտի ունենա գործա-
րանների ու ֆաբրիկաների ու ացիոնալացման բջիջնե-
րի ու արտադրական հանձնաժողովների հետ:

Աշխատանքի պաշտպանութիւնն դրութիւնը, ան-
կասկած, ազդում ե բանվորների կուլտուրական մա-
կարդակի վրա: Վերցնենք հենց թեկուղ բանվորական
որը: Բանվորական որվա տեսողութիւնը Աշխատանքի
Որենսդրքի սահմանած նորմաներին հասցնելով՝ հնա-
րավորութիւնն ե արվում բանվորին՝ մնացած ժա-
մանակն ողտագործել իր կուլտուրական մակարդակը

բարձրացնելու և խելացի ու հաճելի հանգիստ առնելու վրա։ Յեվ ընդհակառակն, դժվար է կուլտուրական աշխատանք կատարել այնտեղ, ուր սիստեմատիկ կերպով արտաժամբա աշխատանք և կտարավում, վորտեղ խոշոր փոփոխություններ են կատարվում բանվորական ժամանակի մեջ և վորտեղ, այդ բոլորի հետեւանքով, բանվորն իր կուլտուրական պահանջներին բավարարություն տալու համար ժամանակ չի ունենում։

Հաշվի առնելով, վոր բանվորների աշխատանքի պաշտպանության գործն այն դեպքում միայն լավ արդյունքներ կտա, յեթե այդ աշխատանքի մեջ կքաշվեն բանվորների և ծտռալողների լայն մասսաները, — Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը պետք է աշխատանքն այնպես կառուցի, վոր բանվորների ու ծտռալողների մասսան մի կողմից իմանա, թե հանձնաժողովն ինչ աշխատանք է կտարում, իսկ մյուս կողմից ամեն կերպ ոգնի նրան, յերեան հանելով բոլոր բացերն ու թերությունները և դործնական առաջարկներ անելով, թե ինչպես պիտի վերացնել այդ թերությունները։ Յեթե Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն իր աշխատանքը տանի փակ—կարիննտալին ձևով, ապա, դժվար թե արդպիսի աշխատանքից կարելի լինի վորեհ դրական արդյունք սպասել։

ԻՆՉՊԵ՞Մ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՈԱ- ՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

ՀԵՑԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքների գլխավոր մեթոդը հետազոտությունն եւ:

Հետազոտությունը պետք է կատարել նախորոք կազմակերպված ծրագրով (ցածը տես որինակելի ծրագիրը):

Եեթե կան աշխատավորների այնպիսի խմբեր, վորոնք տնջատվում են ընդհանուր մասսայից՝ իրենց աշխատանքի առանձնահատուկ բնույթի պատճառով (պահակախումբ, տրանսպորտ և այլն) կամ վարչությունից կորպած լինելու հետևանքով (պահեստներ, խանութներ), ավելի նպատակահարմար եւ այլպիսի խմբերը հետազոտել առանձին:

Հետազոտություն կատարում է կամ գործարտեղկոմի լիտզորը աշխատանքի պաշտպանության խնդրում և կամ հանձնաժողովի վորոշմամբ՝ նրա անդամներից մեկը։ Առանձնապես բարդ ու լուրջ հետազոտություն կատարելու աշխատանքը կարելի յեն հանձնարարել մոտ յերեք հոգուց բաղկացած մի հատուկ հանձնաժողովի, վորոնցից մեկ-յերկուսը կլինեն Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի կողմից, իսկ մյուս-ները այն բանվորական խմբերից կամ բաժնից, վորը պիտի հետազոտվի։ Իրենց աշխատանքի բնույթով և

պալմաններով բոլորովին տարբեր աշխատավորների
խմբեր լինելու գեղքում նպատակահարմար ե տվյալ
խմբակի համար աշխատանքի լծել մի ուրիշ խմբի աշ-
խատավորին:

Հետադոտությունը կատարվում ե այն հաշվով, վոր
չխանգարվի աշխատանքի նորմալ ընթացքը: Հետա-
դոտության ժամանակ կազմվում ե արձանագրություն,
վորի տակ ստորագրում հն հետազոտողը, բաժնի, սեկ-
ցիալի, պահեստի և այլնի վարիչը և տվյալ բաժնի,
սեկցիալի և այլնի պատգամավորը, իսկ նրա բացա-
կայության դեղքում՝ ներկա լեղող աշխատակիցներից
վորեն մեկը (ցածը տես որինակելի արձանագրու-
թյունը):

Եերբ հետազոտության ժամանակ լերեան են գալիս
դեֆեկտներ, թերություններ, Աշխարենսգրքի խախ-
տութեր և այլն, հետազոտողը կարող է մատնացուց
անել լերեան բերած խախտութերը, սակայն հետազո-
տության ընթացքում նկատված թերությունները վե-
րացնելու համար հետազոտողն իր հետազոտության
ընթացքում կարդադրություններ չպիտի անի:

Այդպիսի կարդադրություն պիտի անի գործարտեղիս-
մը, հետազոտության արձանագրությունը քննելուց հե-
տո, այն ել համապատասխան վարչական մարմնի միջո-
ցով. Սկզբում հետազոտության արձանագրությունը
քննվում ե Աշխատանքի պաշտպանության հանձնա-
ժողովի նիստում, վորանեղ միջոցներ են ցուց տրվում
նկատված թերությունները վերացնելու համար: Գոր-
ծարկոմի մոտակա նիստում քննության ե առնվում հե-
տազոտման արձանագրությունը Աշխատանքի պաշտ-
պանության հանձնաժողովի լեզուակացությամբ՝ դե-

Փեկաները վերացնելու մասին արված ցուցմունքներով։ Գործարտեղկոմի վորոշումը հետազոտման արձանագրության հետ ուղարկվում է վարչությանը՝ ի կատար ածելու (արձանագրությունների պատճենի մասին տես ցածը):

Հիմնարկությունը կամ նրա մի մասը հետազոտելիս՝ բացի այն, վոր հետազոտվում է, թե ինչ չափով և կիրառված աշխատանքի պաշտպանության մասին չեղած որենքները՝ համաձայն Աշխորենսդրքի, միաժամանակ հանձնաժողովի խնդրի մեջ և մտնում նաև բանվորաշխատավորների բնակարանային պայմանների հետազոտությունը։

Աւագանելի պաօպանության հետազոտման որինակելի անկետա-

ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

1. Հետազոտվող մարմնի անունը.....

2. Բանվորների և ծառայողների թիվը

ՏՆԱՄԱՐԴԻԿ	ԿԱՆԱՏՔ	ԸՆԴՀԱՄԵՆԸ
Մինչև 14 առաջնայան տարեկան	Մինչև 14 առաջնայան	Մինչև 14 առաջնայան
Մինչև 16 առաջնայան	Մինչև 16 առաջնայան	Մինչև 16 առաջնայան
Մինչև 18 առաջնայան	Մինչև 18 առաջնայան	Մինչև 18 առաջնայան

Բանվորներ

Ծառայողներ

3. Ո՞վ և մասնակցում հետազոտմանը .

Վարչությունից

Բանվորներից

4. Կան արդյոք որենքով պահանջված հսկողության գրքերը .

ա) Արտաժամյա աշխատանքների գիրքը

բ) Ապահովագրական մուծումների վերահսկիչ գիրքը (Աշխատանքը 145 հոդվածը)

5. Ճիշտ են տարված 4-րդ կետում նշված գրքերը

6. Կան արդյոք ներքին կարգապահության կանոններ (Աշխատանքը 54 հոդվածը) և աշխատավայրերում կախված են արդյոք Աշխատանքիրքն ու ներքին կարգապահության կանոնները (Աշխատանքը 145 հոդվ.) .

7. Բոլորին տրված են հաշվեգրքույկներ և ճիշտ են կատարված նրանց գրանցումները (լեթե վոչ, ինչն և սխալ)

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐԸ

8. Պահպանվեմ և արդյոք 8-ժամյա բանվորական որը ֆիզիկական աշխատանք տանողների համար (Աշխատանքը 94 հոդվածը)

9. Պահպանվեմ և արդյոք 6-ժամյա բանվորական որը մտավոր աշխատանք կտաարողների համար (Աշխատանքը 95 հոդվ.)

10. Պահվեմ են արդյոք բանվորական որվա կրծատման նորմաները գիշերալին աշխատանքների դեպքում (Աշխորենսգրքի 136 հոդ.)
11. Պահվեմ և արդյոք կրծատ բանվորական որվա որենքն անչափահասների համար (հոդվ. 96) և մինչև 16 տարեկան փոքրահասակների համար (Աշխորենսգրքի 136 հոդվ.)
12. Զի՞ լերկարացվում արդյոք նորմալ բանվորական որը գործարքալին աշխատանք կիրառելու հետևանքով
13. Կիրառվեմ են արտաժամյա աշխատանքներ, թնչ չափով և թնչ դեպքերում
14. Արտաժամյա աշխատանքների համար կմ արդյոք վարչության գրավոր կարգադրությունը և աշխատանքի տեսչության թույլտվությունը արտաժամյա աշխատանքի համար
15. Զի՞ պատահել, վոր արտաժամյա աշխատեցրած լինեն անչափահասին, հղի կամ ծծկեր լերնիսառնեցող բանվորուհուն (Աշխորենսգրքի 105, 131 հոդ.)
16. Լիովին վարձատրվեմ են արտաժամյա աշխատանքները և թնչ կարգով (ուոճիկի հետ, առանձին և ալյն)
17. Արտաժամյա աշխատանքի համար պարտքեր կամ վճարման համար կոնֆլիկտներ չկմն
18. Արտաժամյա աշխատանքները աշխատողների հետ նախորոք համաձայնություն գալիք և կատարվում և թնչ ձեռով և արվում ալդ
19. Պահպանվեմ են որենքով սահմանված հանգստի և տոն որերը (Աշխոր. 109, 111, 112 հոդ.)

20. Պահպանվելում և շաբաթական 42-ժամիա հանդիսատը բոլոր աշխատավորների համար (Աշխարհագրքի 109 հոդ.)
21. Տոների և հանգստի որերի նախորյակին բանվորական որը չի անցնում 6-ժամիա որից (Աշխոր. 113 հոդ.)

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

22. Բոլոր աշխատողներին տրված և հերթական արձակուրդ (Աշխոր. 114 հոդ.)
23. Ի՞նչ թերություններ են լեղել անցլալ արձակուրդակին կամպանիալի ընթացքում և ի՞նչպիսի փոփոխություններ են ցանկալի մացնել (ժամանակամիջոցը, հերթը և ալին)
24. Արդիոք մասսակար զբաղմունքի համար տրված և լրացուցիչ արձակուրդ
25. Արդիոք արձակուրդ չտալը իսկապես անհրաժեշտությունից և բղխում (ցուց տալ պատճառը) և դա Գեհձ-ի միջոցներ և կատարվում, թե վոչ
26. Արդիոք չոգտագործված արձակուրդի միացնում և կատարվում, թե դրամական փոխհատուցում և տրվում (Աշխորենսգրքի 120 հոդ.)
27. Դեպք չի լեղել, վոր արձակուրդի միացնում կատարեն 2 տարուց ավելի ժամանակամիջոցի համար (Աշխորենսգրքի 120 հոդ.)

ԱՆՁԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

28. 16 տարեկանից ցած փոքրահասակները արդիոք

աշխատանքի տեսչի թուլովությամբ են ընդունված.

29. Փոքրահասակների և անչափահասների համար կիրառված և կրճատ բանվորական որը (Աշխարենսդրքի 96 և 136 հոդ.) և լրացուցիչ տրձակուրդը հերթական արձակուրդի ժամանակ
30. Արտաժամլա և գիշերային աշխատանք չի տրվում արդյոք անչափահասներին
31. Անչափահասներին չե՞ն աշխատեցնում արդյոք մխասակար ու ծանր աշխատանքների մեջ
32. Արդյոք փոքրահասակների ու անչափահասների աշխատանքն իր միապաղապությամբ բթացնող աղղեցություն չի ունենում նրանց հոգեբանունության վրա և ոժանդակո՞ւմ և արդյոք նա նրանց պրոֆեսիոնալ վորակի բարձրացմանը
-
33. Արդյոք աշակերտներն այնպիսի պայմաններման են աշխատում, վոր ապահովված լինի նրանց արհեստ սովորելը և արդյոք նրանց չե՞ն զբաղեցնում այնպիսի աշխատանքներով, վորոնք կապ չունեն նրանց սովորած արհեստի հետ.

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ

34. Արդյոք կանանց չե՞ն աշխատեցնում առանձնակերպ մխասակար ու ծանր աշխատանքներում
-
35. Հղի ու ծծկեր լերեխա ունեցող կանանց չե՞ն աշխատեցնում արդյոք արտաժամլա (Աշխարենսդրքի 131 հոդ.)
36. Արդյոք հղի կտնանց իր ժամանակին տրվում է

37. Ծծկել լերեխա ունեցող մալրերը, բացի ընդհանուր ընդմիջումից, ստանում են հատուկ ընդմիջումներ՝ լերեխալին կերակրելու համար (Աշխորենսդրքի 134 հոդ.)

ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

38. Շենքը չունի արդյոք լուրջ թերութիւններ (հնությունը, տանիքի վիճակը, առաստաղի, պատերի, գոների, հատակի դրությունը և այլն)
39. Մաքմւր և պահվում արդյոք բանվորական շենքը և շուտ-շմւտ և սրբվում. կմ արդյոք հատուկ մարդ, վոր հետեւում ե մաքրությանը
40. Ջրմուղ կմ արդյոք, բավարար վիճակմւմ և գտնվում արտաքնոցը
41. Ռդափոխություն (կմ արդյոք)
42. Ի՞նչ աստիճանի տաքություն կա, տաքացվման շենքը և ի՞նչ վիճակում են գտնվում վառարանները
43. Բավարմը ե լուսավորությունը աշխատանքի բոլոր վայրերում
44. Բավարար չափով ընդարձակ ե շենքը աշխատանքների համար
45. Կմ արդյոք բավականաչափ լեռացրած ջուր և մաքմւր և պահվում այն.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՑ

46. Մասնագիտական հադուստ ստանալու իրավունք

ունեցողներն ստացել են հագուստը Աշխաժողկումատի ցուցակով ու հավաքական պայմանագրով

47. Մասնագիտական հագուստը ժամանակին և տըրվում և ինչպիսի վորակի

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

48. Իր ժամանակին հայտնվելմ և սոցապվարչությանը նոր ընդունված աշխատակիցների մասին

49. Բոլոր աշխատավորներն ունեն արդյոք բուժական գրքուկիներ

50. Ժամանակին վճարվելով են սոցապառկուները

51. Աշխատավարձի բոլոր տեսակների գիմաց վճարվում և սոցապտոկուները (գործարք, այտաժամայական և ալլն)

52. Աշխատավորներին տեղյակ են դարձրել (պատի պլակատներով) ապահովագրության և բաժանորդագրության բոլոր տեսակների մասին

ՑԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

53. Աշխատավորները վորեա պահանջ կամ կոնֆիդենտ չունեն աշխատանքի պաշտպանության հողի վրա

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքների շրջանակի մեջ և մտնում նաև առան-

ձին աշխատավորների կամ խմբերի հայտարարությունների, դիմումների քննությունը՝ Աշխարհնոգրքի խախտման առանձին դեպքերի մասին, կամ աշխառանքի պաշտպանության խնդրում ունեցած պահանջման մասին:

ԱՇԽԱՌԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Հետազոտումներ կատարելը, լերևան բերված խախտումների մասին նախազգուշացումներ անելը և վերացնելը, հայտարարությունների քննությունը և նըրանց բավարարություն տալը—այս ամենը Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի մշտական աշխատանքներն են: Յուրաքանչյուր ժամանակաշրջանի (մեկ-իրկու ամսվա) աշխատանքներն ավելի պարզ լինելու համար անհրաժեշտ ե առաջուց կազմել հանձնաժողովի աշխատանքների ծրագիրը, այսինքն՝ պարզ ու փորոշ ցուց տալ, թե ինչ պիտի արվի տվյալ ծրագրված ժամանակաշրջանում:

Աշխատանքի ծրագրի նախագիծը մշակում ե հանձնաժողովը և հաստատում ե գործարանեղկոմը, վորը այդ ծրագիրը մտցնում ե գործարանեղկոմի ընդհանուր ծրագրի մեջ: Ծրագրում չպիտի լինեն ընդհանուր ընույթ կրող կետեր: Ծրտգիրը միշտ պիտի հարմարեցրած լինի տվյալ շրջանի հարվածային խնդիրներին, որինակ՝ ձմեռը հարվածային խնդիրը են ձմեռային մասնագիտական հարուստը, վառելանյութը և այլն, ամառը—արձակուրդային կամպանիան, լեռացրած ջուրը, կուրորտները, ամառանոցները և այլն:



Ծրագիրն այնպես պիտի կազմել, վոր նրա իրականացումը տվյալ ժամանակաշրջանում անպայմանորեն հնարավոր լինի:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՑԵՐԿՈՒ ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

1. Արտաժամքա տշխատանքների դիրք մացնելու միջոցով կատարել արտաժամքա աշխատանքների աշխատում:

2. Ծրագիր կազմել՝ կենցաղի բարելավման փոնդի ոգտագործման համար:

3. Ստուգել սոցիալական ապահովագրության մուծումների ճշտությունը:

4. Նկատի ունենալով կուրորտային կամպանիակի մոտենալը, բանվորներին բժշկական քննության լենթարկել:

5. Հետազոտել, թե ինչ չափով են մաշված մասնադիտական հաղուստները:

6. Բանվորների համար փայտի ու ճոթեղենի լերկարատև վարկ ստանալ:

7. Հետազոտել այն բանվորների տները, վորոնք համարվում են հիվանդ և վարձատրություն են ստանում ապօանձարկղից:

8. Հետազոտել.....(այսինչ) ցեխի սանիտարական դրությունը:

9. Ստուգել, թե վարչությունն ի՞նչ չափով է իրագործել անվտանգության տեխնիկակի պահանջները՝ համաձայն աշխատանքի ստնիտարական տեսչի արձանագրության:

10. Հետազոտել մսուրների ու ճաշարանների սանիտարական դրությունը:

ԿԱՊՐԻ ԳՈՐԾԱՐՑԵՂԿՈՄԻ, ԳԿՀ-Ի, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՎԻ ՅԵՎ ՄԻՌԻԹՅԱՆ ՀԵՏ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը գործարտեղկոմին ոժանդակող մարմին և և ամբողջապես նրան և լինթարկվում։ Թուլատրելի չե, վոր հանձնաժողովը կտրվի գործարտեղկոմից և ամփոփվի ինքն իր մեջ։ Աշխատանքի բոլոր ծրագրերը, բոլոր առաջադրվող միջոցները պիտի ներկայացվեն գործարտեղկոմին ի հաստատություն։ Նույն նիստերին հանձնաժողովը պարբերաբար կանոնավոր հաշվետվություն պիտի տա։ Հանձնաժողովի և վոչ մի վորոշումը առանց գործարտեղկոմի հավանության չպիտի կիրառվի կյանքում։ Հանձնաժողովն իր համար առանձին գործալիքություն ամենաին չի ստեղծում, այլամբողջապես ոգտվում եղործարտեղկոմի ապարատից։ ԳԿՀ-ի բանվորական մասի հետ կապ ստեղծելը բղխում և այն հարցերի ընդհանրությունից, վոր քննվում են ԳԿՀ-ում։ ԳԿՀ-ում քննվող հարցերի մեծամասնությունը աշխատանքի պաշտպանության հարցեր են։ Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը տեղյակ պիտի լինի այդպիսի բոլոր հարցերին, պիտի մասնակցի այդ հարցերը ԳԿՀ-ում քննելու նախապատրաստական աշխատանքին, լիթե հարկավոր ե, խորհրդակցական ձայնով պիտի մասնակցի հենց ԳԿՀ-ի նիստին և ընդհանրապես ԳԿՀ-ի բանվորական մասի հետ ամենասերտ կապը պիտի պահի։

Ընդհանուր ժողովներում, ինչպես և պատգամավարական ժողովներում Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը հաշիվ և տալիս միայն գործարտեղկո-

մի հանձնարարությամբ։ Ավելի նպատակահարմար և
ալդ անել մեծ կոլեկտիվներում, վորտեղ ընդհանուր
ժողովում աշխատանքի պաշտպանության մասին ա-
ռանձին հարց դնելը մեծ հետաքրքրություն կարող և
առաջացնել:

ԿԱՊԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉՈՒ- ԹՅԱՆ ՀԵՏ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները
միության հետ կապ են պահում մասնակցելով այն
բոլոր նիստերին, խորհրդակցություններին ու կոն-
ֆերենցիաներին, վոր հրավիրում ե միությունը աշ-
խատանքի պաշտպանության հարցերի շուրջը։

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը կապ
և պահում նաև աշխատանքի տեսչություն հետ։ Աշ-
խատանքի տեսչությունը այն պետական մարմինն և,
վորը հսկում ե Աշխատանքի գործը իրականացնելուն,
և այն բոլոր դեկրետների, հրահանգների ու կարգա-
դրությունների իրագործմանը, վորոնք կարգավորում
են աշխատանքը։

Աշխատանքի տեսչությունը, հանձինս աշխատանքի
տեսչի, կամ սանհիտարական ու տեխնիկական տեսչի,
ոժանդակում ե Աշխատանքի պաշտպանության հանձ-
նաժողովներին իրենց աշխատանքներում։ Սակայն դրա
համար անհրաժեշտ ե համատես կապ պահել Աշխատա-
պանության հանձնաժողովի և աշխատանքի տեսչու-
թյան միջև։ Այդ կապն իրականացվում ե աշխատան-
քի տեսչի հաճախակի ալցելություններով, ամիսը կամ
յերկու ամիսը մեկ անգամ հաշվետվություն ուղարկե-

լով աշխատանքի տեսչին՝ աշխատանքների մասին կամ ձեռնարկության մեջ լեզած աշխատանքի պաշտպանության խնդիրների գրության մասին, անհրաժեշտության դեպքում աշխատանքի տեսչին ձեռնարկություն հրավիրելու միջոցով և այլն:

Աշխատանքի տեսչի իրավունքների մեջ և մտնում վոչ միայն հսկողությունը, այլ լերբեմն ել այս կամ այն վեճի, կոնֆլիկտի լուծումը, ինչպես, որինակ՝ մասնագիտական հագուստի մասին (այդ մասին մանրամասն տես ցածը «Մասնագիտական հագուստը» գլուխում):

Աշխատանքի տեսչի գործունելության շրջանը սահմանագծվում ե բացի Աշխ. Որենսգրքի համապատասխան հոդվածներից (146—150), նաև աշխատանքի տեսչության մասին լեզած հատուկ հրահանգով: Այդ հրահանգի մեջ սահմանված են վոչ միայն աշխատանքի տեսչության աշխատանքների ընդհանուր սկզբունքները, այլև մանրամասն թված են այն բոլոր աշխատանքուր ակզենտները, վոր պիտի կատարի աշխատանքի տեսուչը: Այդ բոլոր աշխատանքների մասին պետք ե իմանա Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը, վորպեսզի վորքան հնարավոր ե, ողտագործի աշխատանքի տեսչի մասնակցությունն իր գործերում և նրա աջակցությունն այն բոլոր թյուրիմացությունները լուծելու գործում, վոր ծագում են ձեռնարկության մեջ:

Աշխատանքի տեսչին բավական մեծ իրավունքներ ե տրված: Իր վրա գրված պարտականությունները կատարելու համար աշխատանքի տեսուչն իրավունք ունի:

ա. Գիշեր թե ցերեկ, որվա բոլոր ժամերին ալցելել

իւ շրջտնում գտնված բոլոր ձեռնարկություններն ու
հիմնարկները և ընդհանրապես այն բոլոր տեղերը,
ուր վարձու աշխատանք ե կատարվում, ինչպես և
բանվորների համար նրանց կից գոլություն ունեցող
բոլոր հիմնարկները (բնակարաններ, հիվանդանոց-
ներ, մոռւրներ, բաղնիքներ և այլն):

բ. Պահանջել գործատերից անհրաժեշտ բացատրու-
թյուններ, պահանջել նիրկալացնել բոլոր անհրաժեշտ
դրֆերը, փաստաթղթերն ու տեղեկությունները, գոր-
ծատերին կարգադրություն անել իր նկատած խախ-
տումների և աշխատանքի պաշտպանության խնդրում
լիղած թերությունների վերացման մասին, վարչական
ու դատական կարգով պատասխանատվության յին-
թարկել աշխատանքի պաշտպանության նորմաները
չպահելու, Աշխարենսգիրքը խախտելու համար և այլն:

Բացի ալդ, աշխատանքի տեսչության վրա պարտա-
կանություն ե զրված յեզրակացություն տալ, թե
թուլատրելի՞ չե բանալ մի վորե և ձեռնարկությունն
կամ նրա մի մասը: Այդպիսով ձեռնարկությունը չի
կարող սկսել աշխատանքը, մինչև վոր աշխատանքի
տեսուչը չտա իր յեզրակացությունը, թե ալդ ձեռ-
նարկության մեջ բանվորների առողջությանն ու կյան-
քին սպառնացող վոչ մի վտանգ չկա և վոր ձեռնար-
կության տեխնիկական դրությունը համապատասխա-
նում ե իր պահանջներին:

Աշխատանքի տեսչին իրավունք ե տրված թուլա-
տրել կամ չթուլատրել փոքրահասակներին աշխա-
տանքի ընդունելը, հղի և փոքր յերեխա ունեցող մի-
այնակ կանանց աշխատանքից ազատելը և այլն:
Բացառիկ դեպքերում, յերբ աշխատանքի տեսչի

կարծիքով քանվորների կլանքին և առողջությանը
պարզ կերպով վտանգ և սպառնում, նա իրավունք
ունի նույնիսկ կարգադրելու, վոր ձեռնարկությունը
փակեն, և այդ կարգադրությունը պարտադիր և ձեռ-
նարկության համար:

Աշխատանքի տեսուչն իր աշխատանքը կատարում
և պարբերաբ բոլոր ձեռնարկություններն ալցելե-
լով, հետազոտության և համապատասխան արձանա-
գրություններ կազմելու միջոցով:

Հասկանալի լի, վոր լիթե Աշխատանքի պաշտպա-
նության հանճաժողովը կարծում ե, թե աշխատանքի
տեսչի ալցելությունն անհրաժեշտ է, անմիջապես հրա-
վիրում և աշխատանքի տեսչին և նրա հետ միասին
աշխատում և վերացնել աշխաղտանության ասպա-
րիզում լեղած այս կամ այն խախտումը և այս կամ
այն թերությունը:

Աշխատանքի տեսչությունն աշխատում և լերեք ուղ-
ղությամբ. աշխատանքի իրավական տեսչությունը
—իրավական նորմաների ասպարիզում, սանիտարա-
կան տեսչությունը —որենքով պահանջվող սանիտա-
րական և առողջապահական որենքների իտարմանը
հսկելու ասպարիզում և տեխնիկական տեսչությունը
—ձեռնարկության առողջապահական պայմանների
հսկողության ասպարիզում՝ բանվորների կյանքի և
առողջության համար անվտանգ դարձնելու իմաստով:

Արդյունաբերության առանձին ճյուղերը, աշխա-
տանքի պայմանների առանձնահատկության պատճա-
ռով, ունեն իրենց առանձին աշխատանքի տեսչու-
թյունները: Այսպես, որինակ՝ արանսպորտան ունի իր
տրանսպորտային աշխատանքի տեսչությունը, գյու-

զատնտեսական ու անտառալին արդյունաբերությունն ունի իր աշխատանքի տեսչությունը։ Բոլոր աշխատանքի տեսչությունները լենթարկվում են Աշխատողկոմատին ու նրա մարմիններին և աշխատում են աշխատանքի բաժիններում։

Ինչպես տեսնում եք, աշխատանքի տեսչի իրավունքների և պարտականությունների այս համառոտ պարզաբանումից ել լեռնում ե, վոր առանց բանվորների ոգնության, դժվար թե աշխատանքի տեսչուչը կարողանա կատարել իր վրա դրված բոլոր պարտականությունները։ Աշխատանքի տեսչի կապը մասսալի հետ նրա աշխատանքի հիմնական պայմանն է հանդիսանում։

Նկատի ունենալով այս հաճնգամանքը, մեր որենսուդրությունը աշխատանքի տեսուչների կազմը դարձրել ե ընտրովի։ Հեղափոխությունից առաջ գոլություն ուներ աշխատանքի տեսչի վողորմելի ծաղրանկարը՝ հանձինս գործարանալին տեսուչների։ Այդ գործարանալին տեսուչները նշանակվում ելին, այն ել հենց տերերի ամենամոտ մասնակցությամբ։ Իսկ մեզ մոտ, աշխատանքի տեսուչներն ընտրվում են հենց իրենց՝ բանվորների կողմից և աշխատավորների միջից։ Աշխատանքի տեսուչն ընտրվում ե բանվորների կողմից՝ միությունների համագումարում կամ կոնֆերենցիալում, ավել շրջանի գործարտեղկոմների կոնֆերենցիալում։

ՅԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Իր աշխատանքն ավելի պարզեցնելու համար Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն իր ան-

դամներից ամեն մեկի վրա վորե և աշխատանք և
դցում: Ապա, վորպեսզի աշխատանքի պաշտպանության
աշխատանքներն ավելի մոտենան ամբողջ բանվորական
մասսային, վորպեսզի այդ ուղղությամբ զարգանա բան-
վորների ու ծառայողների ինքնագործունելությունը,
կազմակերպվում են հատուկ լենթահանձնաժողովներ:
Մեծ մասամբ այդպիսի լենթահանձնաժողովները լերեք
տեսակի լեն լինում — սանիտարական, առողջապահա-
կան և անվտանգության լենթահանձնաժողովների:
Այդ լենթահանձնաժողովներից ամեն մեկի գլուխ
կանգնում և Աշխաղտպանության հանձնաժողովի
անդամներից մեկը:

Յենթահանձնաժողովներն ինքնուրույն կերպով
կլանքում չեն կիրառում իրենց վորոշումները, առ
միայն նախապատրաստում են աշխատանքը, ուսում-
նառիրում են հարցերը և նկութեր են հավաքում
ամբողջ Աշխատանքի պաշտպանության հանձնաժո-
ղովի համար: Յենթահանձնաժողովի աշխատանքի
ծրագիրը պետք է քննվի և հաստատվի Աշխատանքի
պաշտպանության հանձնաժողովի կողմից: Հանձնա-
ժողովը քննում է լենթահանձնաժողովի առաջարկու-
թյունները, իր նիստերում լսում և լենթահանձնաժո-
ղովի զեկուցումն այս կամ այն հարցի մասին, և կամ
ընդունում և կամ բացասում և նրա առաջարկը:
Ինարկե, անթուլատրելի լե, վոր լենթահանձնաժո-
ղովի ամբողջ Աշխատանքի պաշտպանության
հանձնաժողովից, ինչպես ընդհանրապես անթուլա-
տրելի լե, վոր Աշխաղտպանության վողջ հանձնա-
ժողովը կտրվի գործարտեղկոմների աշխատանքից:
Ցուրաքանչլուր լենթահանձնաժողովի խնդիրների

մեջ և մտնում՝ ավելի մեծ թվով բանվորներ ու ծառալողներ քոշել աշխաղաղապանության աշխատանքների մեջ, վորովհետև միայն այդ դեպքում, աշխաղաղաղապանության աշխատանքը լայն մասսաների սեփականություն դարձնելով, կարելի է հույս դնել, վորնա հաջող հետևանքներ կունենա:

ԱՇԽՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱ- ՏԱՆՐՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովի ամբողջ աշխատանքը կարելի է բաժանել 3 մասի.

1. Խսկական աշխատանքի պատճանությունը, վորի մեջ հն մտնում բանվորական որվա նորման կիրառելուն, արձակուրդներին, հանգստի ու տոն որերին հսկելը, արտաժամյա աշխատանքների դեմ պալքարելը, մտանազիտական հագուստ ու մտանազիտական սնունդ տալուն հսկելը, աշխատանքի սանիտարական, առողջապահական պայմաններին հսկելը:

2. Սոցիալական ապահովագրությունը – սոցիալական ապահովագրության բոլոր նորմաների կյանքում կիրառելը, սոցիալական ապահովագրության որենքներով վարչության վրա դրվող բոլոր պարտականությունների ճիշտ կիրառման հսկողությունը:

3. Կենցաղի բարելավման աշխատանք, վորի մեջ մըտնում են հանգստի տներ, սանատորիաներ և այլն ուղարկելը, վարկավորումը, կոռոպերացումը, մսուրներ, ճաշարաններ կազմակերպելը և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՐԸ

Հոկտեմբերի ամենակարևոր նվաճումներից մեկը—
Ց-ժամլա բանվորական որը մեզ մոտ շատ հաճախ ե
խախտվում աջ ու ձախ, բանվորական որը լեռկարաց-
նելու, արտաժամլա աշխատանք կիրառելու և այլ
միջոցներով։ Աշխատանքի պաշտպանության հանձնա-
ժողովի խնդիրների մեջ և մանում՝ հսկել, վոր ձեռ-
նարկության մեջ պահպանվի Ց-ժամլա բանվորական
որը։

Մի ամբողջ շարք որենսդրական վորոշումներ կան,
վորոնք կարգավորում են բանվորական որը և, իհարկե,
Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը ծանոթ
պիտի լինի այդ վորոշումներին։ Հիմնականում բան-
վորական որվա նորմաները կարգավորում են Աշխ-
որենսգրքի 94—102 հոդվածները։

Նորմալ բանվորական որ համարվում է Ց-ժամլա
բանվորական որը։ Սակայն, որենքով այդ Ց ժամլ ա-
մենաբարձր բանվորական որն ե։ Մի շարք արտա-
դրությունների մեջ նորմալ բանվորական որը Ց ժա-
մլից պակաս և սահմանված։ Բանվորական որվա հար-
ցում բացառություն ե արված միայն քաղաքական,
տրհեստակցական և խորհրդավիճ պատասխանատու
աշխատողների մի քանի կարգերի նկատմամբ, վորոնց
աշխատանքը վորեն նորմայով սահմանափակել չի
կարելի։

Բացի վորոհիշլալ պրոֆ. և քաղաքական պատասխա-
նատու աշխատավորներից բանվորական որվա նոր-

մաները չեն տարածվում և այն անձանց վրա, վորոնք
աշխատավարձ ստանում են մասնագիտական դրույ-
քով, իսթե այդ մասին ասված և նրանց անհատական
պայմանագրի մեջ և այն անձինք, վորոնց իրավունք
և տրված չստհմանափակված աշխատանք կատարել:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՐԾԱՏ ՈՐԸ

Ինչպես վերևն ասացինք, բանվորական որվա 8-ժամ-
յա նորման որենքով սահմանված ամենաբարձր նոր-
ման ե¹: Սակայն այդ նորման ել մի շարք արտադրու-
թյունների, պրոֆեսիաների և անձանց համար պակա-
սեցրած ե որենքով: Այենից առաջ կրճատ բանվորա-
կան որ և սահմանած 16-ից—18 տարեկան հասակ ու-
նեցող անձանց համար: Ի հարկի, այս կարգի անձանց
համար բանվորական որվա կրճատումը չի կարող աղ-
դել նրանց աշխատավարձի վրա, ուրիշ խոսքով ասած՝
կրճատվում ե բանվորական որը, տալով լրիվ որվա աշ-
խատավարձ: Մինչև 16 տարեկան հասակ ունեցողները
չեն կարող աշխատել 4 ժամից ավելի: 16-ից—18 տա-
րեկան հասակ ունեցող անձանց բանվորական որվա
տեղությունը չի կարող անցնել 6 ժամից: 6-ժամյա
բանվորական որ և սահմանված նաև մտավոր ու գրա-
սենյակային աշխատանք կատարողների համար, բա-
ցառութամբ նրանց, վորոնց աշխատանքը անմի-
ջականորեն կապված է արտադրության հետ: Աշխատող-

¹ Հոկտեմբերյան հեղափոխության ամսամյա հոքեյանի առ-
թիվ ԽՍՀՄ-ի կենազործկոմը մի վորոշում է հայտարարել յոթ-
ժամյա բանվորական որվա անցնելու մասին: Այդ անցումը ունդի-
յե ունենալու արգյունաքերության յուրաքանչյուր ճյուղի համար
առանձին վորոշումներ հրատարակելով:

կոմատի մշակած զբաղմունքների հատուկ ցուցակի համաձայն կրճատ բանվորական որ և սահմանված նաև այն անձանց համար, վորոնք ստորերկրուա աշխատանք են կատարում (աշխատում են գետնի տակ): Բացի այդ, կրճատ բանվորական որ և սահմանված նաև այն անձանց համար, վորոնք աշխատում են արտադրության այն նյուղերում, վորոնք առանձնապես ծանր ու վնասակար են տուղջապահության համար: Այդ արտադրությունների և նրանց բանվորական որվա նորմաների ցուցակը սահմանված և Աշխաղկոմատի կողմից:

Այսպիսով, հիմնարկությունների աշխատավորների գլխավոր մասսայի (ծառալողների) համար սահմանված և 6-ժամլա բանվորական որ, 8-ժամլա բանվորական որը պահվում և պահեստների, առեւրական (խանութների) աշխատավորների համար, ինչպես և ֆիզիկական աշխատանքի աշխատավորների համար, ինչպիսիք են կառապանները, հավաքարարները և այլն: Աշխատավորների մի ամբողջ կարգ կա, վորոնց բանվորական որվա տեսողությունը չե կարելի վորոշել միայն նրանց պաշտոնի կոչումով, որինակ, հանձնարարությունների գործակալները, եքսպեդիտորները և այլն: Այդ աշխատավորները, լեթե նրանք ծառալում են հիմնարկության, ձեռնարկության կամ տնտեսության այն մասում, վորտեղ աշխատանքը տեսում և ութ ժամ, իրենք ել պետք և աշխատեն ութ ժամ: Ինչ վերաբերում է այն անձանց, վորոնք զբաղված են մտավոր, գրասենյակալին աշխատանքներով և իրենց աշխատանքով անմիջականորեն կապված են արտադրության հետ (առեւրի, գործարանի կամ արհեստանոցի), նրանց բանվորական որվա տեսողության հարցը վարո-

շում և ԳԿՀ.ն, ըստ վորում նախորոք Աշխաշտապանության հանձնաժողովը մանրամասնորեն հետազոտում է, թե վորն ե այդ անձանց անմիջական կապը արտադրության հետ:

Աշխատավորի համար գիշերալին աշխատանքը զգալի չափով ավելի ծանր ե ցերեկվա աշխատանքից: Ահա թե ինչու որենքով կրնատ բանվորական որ և սահմանված գիշերալին աշխատանքի համար:

Վորպես ընդհանուր կանոն գիշերալին ժամանակի նորման պետք ե կրնատված լինի մեկ ժամով: Սակայն այստեղ, ուր աշխատանքը կատարվում է հերթափոխությամբ, 7.ժամյա. բանվորական որ սահմանելը կխանգարեր կանոնավոր հերթափոխությանը: Դրա համար ել սահմանված ե, վոր անընդհատ հերթափահության դեպքում, կամ հերթափոխության աշխատանքներում գիշերված ժամերին ել բանվորական ժամանակը հավասարեցվում ե ցերեկվա ժամերին, այսինքն՝ այստեղ, ուր սահմանված ե 8.ժամյա բանվորական որ, գիշերալին հերթն ել աշխատում ե 8 ժամ, այստեղ, ուր սահմանված ե 6.ժամյա բանվորական որ, գիշերալին հերթն ել աշխատում ե 6 ժամ: Սակայն այսպիսի դեպքերում ավելի աշխատած գիշերալին ժամը վարձատրվում ե ցերեկվա ժամի համեմատությամբ. այսպես՝ գիշերալին մեկ ժամը վարձատըրվում ե վորպես ցերեկվա ^{8/7} ժամ (8.ժամյա բանվորական որվա դեպքում) կամ վորպես ^{6/5} ցերեկվա ժամ 6.ժամյա բանվորական որվա դեպքում): Այստեղ, ուր գիշերված ժամերին գործարքային աշխատանք ե կատարվում, բանվորները ավելի վարձատըրություն են ստանում – գիշերալին աշխատանքի ամեն մի ժամի

համար իրենց կարգի համապատասխան մեկ ժամվազը ուղուցքի 1/1-ը ըդը (կամ 0-ժամիլա բանվորական որվա դեպքում 1/6-ը դը): Գիշերալին ժամեր են հաշվվում լեռներուն ժամը 10-ից մինչև առավոտան ժամը 6-ը:

ԸՆԴՄԻԶՈՒՄՆԵՐ

Նորմալ բանվորական որվա ընթացքում աշխատավորներին ընդմիջում ե տրվում հանգստանալու և սնունդ ստանալու համար: Ամբողջ բանվորական որը անընդհատ, առանց դադարի աշխատելը չափազանց դժվար է, դրա համար ել որենքով ընդմիջում անելը պարտադիր ե: Իհարկե, ընդմիջման ժամանակը բանվորական որվա հաշվի մեջ չի մտնում: Յեթե աշխատանքն այնպիսի ընուլիթ ունի, վոր վոչ մի կերպ հնարավոր չե ընդմիջում անել, համենայն դեպս բանվորներին հնարավորություն պիտի արվի աշխատանքի ընթացքում անունդ ընդունել: Ընդմիջումների հնարավորություն չտվող աշխատանքների ցուցակը կազմում և Աշխաղողկոմտըր: Տնալին, վերանորոգչական, գյուղատնտեսական և սրանց նման այլ աշխատանքների բանվորական որը կարող ե բաժանվել մի քանի մասի, սակայն այնպես, վոր ընդմիջումները 2-ից ավելի չլինեն և վոր ամսվա ընթացքում բանվորական ժամանակի ընդհանուր տևողությունն ավելի չլինի մեկ ամսվա բանվորական ժամերի նորմալ քանակից: Բանվորական ժամերի մեկ ամսվա նորմալ քանակը պետք է հաշվել տվյալ պլրոֆիսիալի բանվորական որվա նորման—(8,7,6, և 4), բազմապատկելով տվյալ ամսի որացուցային աշխատանքի որերի թվի վրա:

Յ.Ժամլա աշխատանքալին որ ունեցող հիմնարկությունների ծառալողների համար Աշխարհովագումատի և ԲԳՏՀ-ի 1925 թվի փետրվարի 3-ի № 25 վորոշման համաձայն բանվորական որը լերկարացրված է $\frac{1}{2}$ ժամով, ըստ վորում ծառալողներին կես ժամվա ընդմիջում և տրվում սնունդ ընդունելու համար։ Ընդմիջումի ժամանակ աշխատավորներն իրավունք ունեն հեռանալու աշխատանքի վայրից։ Ընդմիջման տեսողությունը սրակաս չպիտի լինի կես ժամից և ավել չպիտի լինի լերկու ժամից։ Ընդմիջումը պիտի կատարվի վոչ ուշ քան աշխատանքն սկսելուց 4 ժամ հետո։ Ընդմիջման իսկական տևողությունն ու ժամանակը սահմանվում և տրհմիության և վարձողի միջն կայացած համաձայնությամբ և այդ մասին մատնանշվում և ներքին կարգ ու կանոնների մեջ։ Նույն այդ կանոնների մեջ ճիշտ կերպով վորոշված պիտի լինի լուրաքանչչուր հերթի աշխատավորների բանվորական որվա սկիզբն ու վերջը։

ԱՐՏԱԺԱՄՑԱԿ ԱՇԽԱՏԱՆՔ

Արտաժամլա աշխատանքը բանվորական որվա նորմաները խախտելու ձևերից մեկն եւ ի հարկե, Աշխատանքի Որենսգրքի համաձայն, վորպես կանոն, արտաժամլա աշխատանքը չե թուլլատրվում, սակայն որենքի հոդվածը այդ կանոնից բացառություն ե անում։ «Աշխարենսգրքում ճշորուեն վորոշված բացառիկ գեպքերում թուլլատրվում ե արտաժամյա աշխատանք կատարել, այն պայմանով, վոր կատարվեն վորոշ պահանջներ ու ձևականություններ և վորոշ լրա-

ցուցիչ վարձ տրվի դրա համար (Աշխորենսգրքի 60-ըդ հոդված):

Սակայն կյանքում արտաժամյա աշխատանքը բավական լայն չափերի լե հասնում: Հաճախ արտաժամյա աշխատանք կիրառվում ե վոչ այն դեպքերում, վոր հիշատակված ե Աշխորենսգրքում:

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի խընդիրների մեջ ե մտնում՝ պալքարել արտաժամյա աշխատանքների գեմ և ձգտել ամենանվազ չափերի հասցնել ալը:

Ի հարկե, արտաժամյա աշխատելով, բանվորը մի քիչ ավելացնում ե իր աշխատավարձը, մեծացնում ե իր բարձեն, սակայն սիստեմատիկաբար տրտաժամյա աշխատանքներ կատարելը վերջի վերջու սպառում ե բանվորի ուժերը, իջեցնում ե նրա արտադրողականությունը, վաղաժամ նրան հաշմանդամ ե դարձնում և միաժամանակ մնասում ե հենց տնտեսությանը, ել չխոսենք այն մասին, վոր տնտեսության վրա արտաժամյա աշխատանքն ավելի թանգ ե նստում, քան նորմալ աշխատանքը:

Արտաժամյա աշխատանքներ կիրառելու հարցը կարգավորվում ե Աշխորենսգրքի 103—108 հոդվածներով:

Այդ հոդվածների համաձայն նորմալ բանվորական ժամանակից ավելի, այսինքն արտաժամյա աշխատանք, վորպես ընդհանուր կանոն՝ չի թուլլատրվում: Ամենաբացառիկ դեպքերում միայն թուլլատրվում ե արտաժամյա աշխատանք կիրառել, սակայն նույնիսկ այդ դեպքերուն ել արտաժամյա աշխատանք կիրառելը սահմանափակված ե ինչպես ժամերի թվի նկատմամբ, այնպես ել աշխատանքի ընույթի տեսա-

կետից։ Ամենից առաջ արտաժամյա աշխատանք նշա-
նակել կտրելի է միմիայն աշխատանքի տեսչի թուլլ-
տվությամբ։ Արտաժամյա աշխատանք կիրառելու հա-
մար նախապես պետք է լինի գնահատու-կոնֆլիկտա-
յին հանձնաժողովի համաձայնությունը, վորն իր հա-
մաձայնությունը տալիս դեկավարվում է որենքի այն
կետով, վորտեղ տոված է, թե բացառիկ դեպքերում
կարելի է թուլլատրել արտաժամյա աշխատանքներ։ Ո-
րենքի համաձայն արտաժամյա աշխատանք թուլլատրել
կարելի է միայն այն արտադրություններում, վորոնք
անհրաժեշտ են Հանրապետության պաշտպանության
համար, կամ թե հասարակական դժբախտություններն
ու վտանգները վերացնելու, կանխելու համար, ինչ-
պես, որինակ՝ համաճարակների, տարերակին դժբախ-
տությունների և այլն դեպքերում։ Առա, ջրմուղում,
ելեկորոկայաններում, կոլուղիներում, տրանսպոր-
տում, փոստ-հեռագրական և հեռախոսային կայաննե-
րում, այն դեպքերում, յերբ անհրաժեշտ և վերացնել
ալս կամ այն անսպասելի դրությունը, վորն սպառ-
նում և աշխատանքի այդ մատնանշած ճյուղերի կա-
նոնավոր աշխատանքի ընթացքին։ Արտաժամյա աշ-
խատանք թուլլատրվում է նաև այն դեպքում, յերբ
անհրաժեշտ և վերջացնել սկսած աշխատանքը, վորը
չնախատենված կամ պատհական տեխնիկական
պատճառներով հնարավոր չի յեղել ավարտել նորմալ
բանվորական ժամերին, և այն ել միայն այն դեպ-
քում, յերբ սկսած աշխատանքը դադարեցնելու հետե-
քանը կարող են փչանալ մեքենաները, հարմարու-
թյունները և կամ նլութը։ Վերջաղես թուլլատրվում
և արտաժամյա աշխատանք կատարել զանազան մեքե-

նաներ և ալլ սարքավորում վերանորոգելու դեպքում, յիթե արդ մեցենաների ու սարքավորման քանդված մնալու հետեւանքով կանդ կառնի մեծ թվով աշխատավորների աշխատանքը: Ինչպես վերևն ասացինք, բոլոր այս դեպքերումն ել արտաժամկա աշխատանք կիրառել կարելի է միմիայն աշխատեսչի թուլլովությամբ: Բացի այդ, նախապես պահանջվում է ԳԿՀ-ի համաձայնությունը:

Այնուամենայնիվ, որենքով նախատեսնված ե, վրբառանձնապես խիստ շտապ դեպքերում, յիթե վերը հիշված պարբաններից վորեն մեկը կա, առանց աշխատանքի տեսչից նախորոք թուլլովություն ստանալու, կարելի է արտաժամկա աշխատանք նշանակել այն պայմանով, վոր արտաժամկա աշխատանքն սկսելուց հետո, 24 ժամից վոչ ուշ, աշխատեսչին տեղեկություն տրվի կատարվող արտաժամկա աշխատանքի մասին: Եթառ շտապ դեպք ասելով պիտի հասկանալ այն դեպքերը, յերբ արտաժամկա աշխատանք կատարելու անհրաժեշտությունն ստեղծվել է աշխատանքն սկսելուց անմիջապես առաջ և հնարավորությունն չե լնդել իր ժամանակին թուլլովություն ստանալու, իսկ մինչև թուլլովությունն ստանալն արտաժամկա աշխատանք չսկսելը կարող է մնաս հասցնել պետքանը, պատճառ զանալ նյութերի փշանալուն կամ ուրիշ բանվորների անգործ մնալուն:

Քանի վոր արտաժամկա աշխատանքը շտապի վաստակար և աշխատավորի որգանիզմի համար, քան նորմալ բանվորական ժամանակի աշխատանքը, դրա համար ել որենքը արտաժամկա աշխատանքներ կտարելուց ապահովում է բանվոր դասակարգի ամենա-

թուլլ մասին։ Ալսակես՝ որենքով բոլորովին արգելվում է արտաժամյա աշխատեցնել 18 տարին չըրացած անձանց։ Անհրաժեշտ է խստորեն հետեւի Աշխորենսպրքի այս կետի (105) խախտմանը։ Բացի այդ, նույնիսկ այն դեպքերում, եթե որենքով կարելի է թուլլատրել արտաժամյա աշխատանք կատարելը, այդ դեպքում ել յուրաքանչյուր վարձված աշխատավորի մի մի տարվա ընթացքում կատարելիք արտաժամյա աշխատանքը սահմանափակվում է։ Մի տարվա ընթացքում յուրաքանչյուր վարձված աշխատավոր 120 ժամից ավել աշխատել չի կարող, և այն ել իրար հետեւից 2 սրվա ընթացքում։ Ժամեցից ավելի արտաժամյա աշխատել չի թուլլատրվում։ Տնտեսության մի քանի ճյուղերում միայն, վորոնք սեղոնացին ընուլթ ունեն և վորտեղ վերոհիշյալ կանոնները չեն կարող կիրառվել, առանց տնտեսությանը խոշոր մըաս հասցնելու յուրաքանչյուր աշխատավորի արտաժամյա աշխատանքների ժամերի քտնակը կարող և ավելացնել Աշխողկոմատը, ՀԱՄԿԽ-ի (Հայաստանում ՀԱՄԽ-ի) համաձայնությամբ։ Աշխողկոմատը ընդհանուր կանոններից արդպիսի բացառություններ և արել ֆինֆողկոմատի (գյուղատնտեսական հարկի) աշխատավորների, Արդիողկոմատի աշխատավորների և մի քանի սեղոնացին աշխատանքների համար։

Վերոհիշյալ կանոնները պահպանելու համար պետք է արտաժամյա աշխատանքների հաշվառում կատարվի։ Հաշվառումը կատարվում է հատուկ գրքով, Աշխողկոմատի սահմանած ձևով։ Հաշվառումը տարվում և յուրաքանչյուր որացուցակին տարվա սկզբից։

Քանի վոր արտաժամյա աշխատանքներ կատարելու

համար պահանջվում են վերոհիշյալ բացառիկ պարմաններն ու դեղքերը, միանգամայն հասկանալի լե, վորորենքն արդելում և արտաժամյա աշխատանք կատարել՝ աշխատանքից ուշանալու պատճառով կորցրած ժամանակը լրացնելու նպատակվի:

Աշխատանքից ուշանալու խնդիրը լուծվում ու կարգավորվում և միայն ներքին կարգ ու կանոնների համաձայն: Ուշացած ժամանակամիջոցը արտաժամյա աշխատանքով լրացնել չի թույլատրվում:

ՀՐԱՀԱՆԳ ԱՐՏԱԺԱՄՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Արտաժամյա աշխատանքների դեմ պայքարելու հաջողությունը պահանջում է՝ մանրամասն ուսումնասիրել այն պատճառները, վորոնք առաջացնում են այդ աշխատանքները և գտնել այնպիսի միջոցներ, վորոնք կարող են վերացնել այդ պատճառները: Սակայն շատ դեղքերում այդ աշխատանքը դժվարանում է՝ արտաժամյա աշխատանքների հաշվառում չլինելու և այդ աշխատանքի մասին մանրամասն տեղեկություններ չլինելու պատճառով, թե ով և կարգադրել արտաժամյա աշխատել (վարչությունը):

2. Արտաժամյա աշխատանքների դեմ պայքարելու գործը կանոնավոր կերպով կազմակերպելու համար, մանավանդ խորհրդացնեն հիմնարկներում, ամենից առաջ անհրաժեշտ և ուշադրություն դարձնել աշխատանքի հաշվառման, արտաժամյա աշխատանք կատարելու համար վարչության կարգադրությունը և աշխատանքի տեսչի թույլավությունը լինելու վրա:

3. Արտաժամյա աշխատանքների հաշվառումը պետք է տարվի արտաժամյա աշխատանքների գրքով, վոր լուրազոնչուր ձեռնարկություն պիտի տանի հատուկ ձևով, համաձայն ԽՍՀՄ Աշխաղողկոմատի 1923 թվի հոկտեմբերի 15-ի № 115 վորոշման:

Գիրքը այնպես պիտի տարվի, վոր արտաժամյա աշխատանք կատարելուց հետո, ամենառեց հետեւալ որը, գրանցումներ կատարվի կատարված աշխատանքի մասին: Գրանցումները պիտի կատարի վարչության կողմից նշանակված անձը: Գործարտեղկոմն ուժեղ հսկողություն պիտի ունենա արտաժամյա աշխատանքների գրքի նկատմամբ:

4. Պետք է կանոն ստումանել (և ժողնել ներքին կարգ ու կանոնների մեջ), վոր առանց վարչուրյան գրավոր կարգադրության վաշ վոր իրավունք չունի արտաժամյա աշխատելու: Գրավոր կարգադրության մեջ պիտի նշված լինի ինչպես այն անձանց ցուցակը, վորոնք պիտի աշխատեն, նույնպես յել այն մասին, թե վորքան պիտի աշխատեն նրանք: Ինչ գնով ել լինի, այս բանը պետք է կիրառել և ամեն կերպ աշխատել այս կանոնը ընդհանրացնել բանվորների ու ծառալողների մեջ: Այս կանոնը խախտողներին առաջին անգամ պետք է կարգի հրավիրել գործարտեղկոմի միջոցով, իսկ հետո, կըկնության դեպքում պետք է աշխատել միության միջոցով ավելի խիստ միջոցների դիմել այն անձանց նկատմամբ, վորոնք խախտում են այդ կանոնը:

5. Այն դեպքերում, ինը գործը վերաբերում է փոքր չափով արտաժամյա աշխատանքի, իեղակացություն կարող է տալ գործարտեղկոմի տև կամ այն անդամը, ում վոր մշտապես հանձնարարված է զբաղվել այդ

գործով (նախազահը, քարտուղարը կամ թե Աշխատշտպանության հանձնաժողովը): Իսկ չեթե խնդիրը վերաբերում է բանվորների կամ ծառալողների խոչը խմբերին (10—20 հոգի), կամ թե արտաժամյա աշխատանքը լիրկարատն և լինելու (5—6 որ), այդպիսի գեղքերում անհրաժեշտ է նախորոք մանրամասն ուսումնասիրել արտաժամյա աշխատանքների նպատականարությունը, պարզել թե չի կարելի, արդյոք, ժամանակավոր աշխատավորներ հրավիրելով, գործը տանել առանց արտաժամյա աշխատանքի: Այս հետազոտության տրդունքը պիտի քննվի գործարտեղեղիոմի պլենումում, վորը և տալիս և իր լիզրակացությունը:

6. Վերոհիշյալ բոլոր կանոնները պահելու դեպքում ել Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի խընդիրների մեջ և մտնում ուսումնասիրել արտաժամյա աշխատանք կիրառելու բոլոր գեղքերը, նպատակ ունենալով այնպիսի միջոցներ գտնել, վորոնք կկարողանան վերացնել այդ արտաժամյա աշխատանքները:

7. Սույն հրահանգի 3 և 4 կետերի խախտման դեպքում Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը պետք է վարչության ներկայացուցչի (վարիչի, վարպետի, պետի) ներկայությանը համապատասխան արձանագրություն կազմի կատարված արտաժամյա աշխատանքների բոլոր գեղքերի համար:

Արձանագրության հաստատված պատճենը կամ ընագիրը պետք է ուղարկվի միություն և աշխատանքի ըրջանալին տեսչին:

ՀԱՆԳՍՏԻ ՈՐԵՐ

Բացի 8-ժամկա բանվորական որ սահմանելուց, մեր
Աշխորենսգիրքը նախատեսնում և նաև շաբաթական
42 ժամկա հանգիստ։ Այդ հանգիստը տեսում և մեկ ո-
րից ավելի և կազմվում և «հանգստի որվա» 24 ժամից
ու «հանգստի որվա» նախորլակի 18 ժամից։

Շաբաթական 42 ժամվա անընդհատ հանգիստը տըր-
վում և այն որերին, վոր սահմանում և տեղական աշ-
խատանքի բաժինը՝ արհմիությունների ներկալացու-
ցիչների համաձայնութիւնը։ Տվյալ վայրի բանվորնե-
րի ու ծառալողների աղքալին և կրօնական կազմի
համաձայն հանգստի որերը կարող են նշանակվել ինչ-
պես կիրակի որերը, այնպես և շտբաթվա վորեն մի
ուրիշ որը։ Մական հնարավոր են նաև այնպիսի դեպ-
քեր, յերբ ձեռնարկության աշխատանքների պայման-
ներից յելնելով՝ այս կամ այն աշխատավորները չեն
կարող ոգտագործել ընդհանուրի համար սահմանված
շաբաթական հանգստի որը։ Այդպիսի դեպքերում հան-
գիստ պիտի տրվի մեկ ուրիշ որ, վորը հարմար և այդ
աշխատավորներին։ Այս կանոնը պիտի կիրառվի նաև
այն ձեռնարկություններում, վորոնց զործունելու-
թյունն ըստ իրենց բնույթի անընդհատ և, որինակ՝
անընդհատ տռետուրը, գործարանի կամ զավոդի
անընդհատ աշխատանքը, ջրմուղը, կուտողին, ելեկտրո-
կալանները և այլն։ Այդպիսի դեպքերում ընդհանուրի
համար սահմանված հանգստի որերի փոխարեն այդ
աշխատավորների ըուրագանչուր խմբին տրվում և մի
հատուկ հանգստի որ։ Այդպիսի դեպքերում բանվորա-
կան որվա կրճատումը կատարվում և վոչ թե ընդհա-

նուրի համար սահմանված հանգստի որվա նախորյակին, այլ լուրաքանչլուր աշխատավորի հանգստի որվա նախորյակին։ Բացի ընդհանուր կարգով սահմանված հանգստի որերից, կան և հատուկ հանգստի որեր, տարվա ընթացքում 8 որից վոչ ավելի։ Այդ հատուկ հանգստի որերը (52 շաբաթամաս հանգստի որերից դուրս) ստհմանում են Աշխատանքի Բաժինները, Արհմիությունների խորհրդի համաձայնությամբ, ըստ վորում, այդ հանգստի որերը ստհմանելիս նկատի չեն առնվում տեղական պայմանները, ընտէչության կազմը, ժողովրդական տոնները և այլն։

Բացի ամեն շաբաթյա հանգստի որերից և հատուկ հանգստի որերից՝ աշխատանք կատարել միանդաման արգելվում ենակ հետեւալ տոն որերին, — հունվարի 1 ին — նոր տարի, հունվարի 22-ին — 1905 թ. հունվարի 9-ի որը, մարտի 12-ին — միապետության տապալման որը, մարտի 18-ին — Փարիզի կոմունակի որը, մարտի 1-ին — Խոսերնացիոնալի որը, նոյեմբերի 7-ին և 8-ին — պրոլետարական հեղափոխության որեւը։ Սակայն կան արտադրություններ, վորոնք այդ որերին չեն կարող դադարեցնել իրենց աշխատանքը։ Աշխատողկումատը ՀԱՄԽ-ի համաձայնությամբ կազմում և այն ձեռնարկությունների ցուցակը, վորոնք իրենց տշխատանքի բնույթից չենելով, չեն կարող դադարեցնել աշխատանքը այս կամ այն հանգստի կամ տոն որերին։

Ամեն շաբաթյա հանգստի որերի և տոն որերի նախորյակին բանվորական որը չի կարող ավելի լինել 6 ժամից, ըստ վորում, այդ որերին (հանգստի և տոն որերի նախորյակիներին) բանվորական որը վարձատրված է աշխատանքը այս կամ այն հանգստի կամ տոն որերին,

իսկ գործարքալին աշխատանքի դեպքում չաշխատած 2 ժամի դիմաց լրացուցիչ վարձատրություն ե արփում համաձայն բանվորի կտրգին։ Հատուկ հանգստի որերի նախորդակին բանվորական որը չի կրճատվում։

Այն հիմնարկներում և ձեռնարկություններում, վորտեղ նորմալ բանվորական որը 6 ժամից չի անցնում, հանգստի որերի նախորդակին բանվորական որը չի կրճատվում։

ՀԵՐԹԱԿԱՆ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ

Բացի ամենորդա 16 ժամիա հանգստից (վոչ աշխատանքալին ժամանակից), բացի ամեն շաբաթիա 42 ժամվա և հատուկ հանգստի որերից, ինչպես և բացի վոչ աշխատանքալին—տոնական որերից, Աշխորենսգրքի համաձայն լուրաքանչյուր աշխատավոր տարվա ընթացքում ոգտվում ե նաև յերկարատեւ—յերկշաբաթյա արձակուրդից, իսկ հատուկ դեպքերում նաև չորս շաբաթյա արձակուրդից։

Հերթական և լրացուցիչ արձակուրդները Հոկտեմբերի ամենաարժեքավոր նվաճութերից մեկն են։

Բացի արդ, կա նաև Աշխատավոր աշխատանքալի վորոշումը, վորը տալիս և այն պրոֆեսիաների ու պաշտոնների ցուցակը, վորոնց աշխատավորներն իրավունք ունեն տարվա յերկշաբաթյա արձակուրդից բացի նաև լրացուցիչ աշխատանքալի ստանալու։

Աշխատանքալի 114—120 հողվածների համաձայն այն բոլոր անձինք, ովքեր վարձու աշխատանք են կատարում և առանց ընդհատումների աշխատել են $5\frac{1}{2}$ ամիս, տարվա մեջ մի անգամ հերթական արձակուրդ

են ստանում, վորի տևողությունը շաբաթից պակաս չպիտի լինի: Այդ արձակուրդի տևողությունը մեկ ամսից պակաս չի սահմանվում 18 տարին չըրացրածների համար, ինչպես և այն անձանց համար, ովքեր աշխատում են առողջության համար առանձնապես վտանգավոր ու վնասակար ձեռնտրկություններում: Այդ առանձնապես վնասակար ու վտանգավոր ձեռնարկությունների ցուցակը կազմում ե Աշխաժողկոմատը, Արձակուրդն ողտագործել կարելի է ամբողջ տարվա ընթացքում, սակայն դա չպիտի խանդարի ձեռնարկության, հիմնարկության կամ տնտեսության աշխատանքների կանոնավոր ընթացքին: Արձակուրդն ողտագործելու ժամանակն ու կարգը պիտի սահմանի գնահատու-կոնֆլիկտալին հանձնաժողովը, իսկ վորտեղ այդպիսին չկա, համաձայնություն պիտի կայանա ձեռնարկության, հիմնարկության կամ տնտեսության վարչության և գործարկումի կամ պրոֆիլազորի միջև:

Անչափահամաների և առանձնապես վնասակար ու վտանգավոր ձեռնարկություններում աշխատող անձանց լրացուցիչ արձակուրդը չի կարող փոխարինվել դրամական փոխատուցումով և ինչ գնով ել լինի, ովիտի արվի այդ արձակուրդը: Յեթե աշխատավորի հերթական արձակուրդը չի ոգտագործվել վոչ իր մեղքով, ԳԿՀ-ի վորոշմամբ այդ չոգտագործված արձակուրդը կարող է փոխարինվել դրամական փոխատուցումով, կամ թե հետեւալ տարին նրա արձակուրդը կարելի է լինել արձակացնել այդ չոգտագործված արձակուրդի չափով: Յերկու տարուց ավելի արձակուրդի միացում կատարելը չի թուլատրվում:

ԿԱՆԱՆՑ ՅԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՈՒԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի որենքը աշխատավորության վորոշ
խմբերին առանձնացրել և դրել եւ հատուկ արտօնված
պարմանների մեջ։ Դրանք կանալք և փոքրահասակ,
անչափահասներն են։ Աշխատավորության այդ խմբերն
իրենց ֆիզիկական գրությամբ բանվոր դասակար-
գի ամենաթուլլ մասն են կազմում և զարմանալի չե,
վոր մեր որենսգրությունը նրանց աշխատանքի պաշտ-
պանությանը առանձին գլուխ եւ հատկացրել:

Կանանց և տնչափահասների աշխատանքի պաշտ-
պանության հիմնական խնդիրները կարգավորվում են
Աշխորենսգրքի 129—134 հոդվածներով։

Աշխատանքի որենսգիրքը մասնավորապես ապա-
հովում եւ կանանց ու լերեխաներին այն աշխատանք-
ներից, վորոնք կապված են ծանրություններ փոխա-
դրելու հետ։ Այսպես, որինակ՝ կանանց բոլորովին չի
թույլատրվում աշխատել այն գործերի մեջ, վորտեղ
աշխատանքը բացառապես 10 ֆնտից ավելի ծանրու-
թյուններ փոխադրելու հետ եւ կապված։ Այսպիսի աշ-
խատանքներում կանալք նշանակվել կարող են միայն
ամենաբացառիկ դեպքերում, վորոշ ժամանակամիջո-
ցով, այն ել յուրաքանչյուր առանձին դեպքում աշ-
խատանքի տեսչի թույլատվությամբ։ Բնդիանը ապահով-
ժանրություններ փոխադրելու հետ կապված աշխա-
տանքներում կանանց ընդունել թույլատրվում եւ մի-
այն այն դեպքում, յեթե այդ ծանրություններ փոխա-
դրելու աշխատանքը նրանից բանվորական որվա մեկ
լերորդից ավելին չի խլում։ Մակայն նույնիսկ այդ

դեպքերի համար ել վորոշ սահմանափակումներ են ար-
ված. այսպես՝ մինչև 18 տարեկան անչափահասների
համար ծանրություն փոխադրելու ամենաբարձր չափն ե
25 ֆ., հասակավորների համար—40 ֆ. (յերբ ծանրու-
թյունը փոխադրվում է շալակով կամ ձեռքով): Յեթե
ծանրությունը փոխադրվում է յերկաթզծի վրալով և
հատուկ վագոնիկներով (հըելով), այդ դեպքում անչա-
փահասների նորման և 20 փութ, իսկ չափահասներինը՝
30 փութ: Յեթե ծանրությունը փոխադրվում է հատա-
նիվ ձեռքի փոքրիկ սալյակներով, այդ դեպքում չա-
փահասների նորման և 3 փութ, իսկ անչափահասնե-
րին ալգախիսի աշխատանք կատարել ամենեին չի
թուլատրվում:

Անչափահասների համար սահմանված ե, վոր տարին
մի անգամ պարտադիր կերպով բժշկական քննություն
լենթարկվեն: Յեվ յեթե բժշկական քննիչ հանձնաժո-
ղովը պարզեց, վոր անչափահասի առողջությունն ան-
բափարար ե, այդ դեպքում աշխատանքի պաշտպանու-
թյան խնդիրների մեջ և մտնում—ոգնել կատարելու
բժշկական հանձնաժողովի տվյալ ցուցմունքները,
այդպիսի անչափահասին փոխադրել ավելի հեշտ
աշխատանքի, ուղարկել նրան սանատորիա, հանգստի
տուն կամ թե հատուկ բժշկության: Իսկ, ընդհանրա-
պես, անչափահասներին աշխատանքի ընդունել կա-
րելի յե միայն բժշկական քննությունից հետո, վորը
պիտի պարզե, թե տվյալ անչափահասին, իր առողջա-
կան գրությամբ, կարելի՞ յե թուլ տալ տվյալ աշխա-
տանքը կատարել, թե վոչ:

Կանանց և 18 տարին ըլրացրած անչափահասներին
աշխատեցնել արգելվում և նաև ստորերկրուա աշխա-

տանքներում և տռանձնապես ծանր ու տողջության համար վիաստկար արտադրություններում։ Այս կանոնից բացառություն անելու վորեւ դիպօք թուլատըրվում և միմիայն Աշխատողկոմատի հատուկ վորոշումով։ Կանանց և 18 տարեկանից փոքր անչափահասներին չի թուլատրվում նաև գիշերալին աշխատանքներ կատարել։ Սակայն այս սահմանափակումների (մանավանդ վերջինի) հետևանքն այն և լինում, վոր մի շարք արտադրություններից բոլորովին դուրս և մղվում կտնանց աշխատանքը, վորի պատճառով ել աճում և կտնանց գործազրկությունը։ Մյուս կողմից ել, կան այնպիսի արտադրություններ, վորոնք չեն կարող լոլագնալ առանց կանանց գիշերալին աշխատանք կիրառելու։ Դրա համար ել Աշխատողկոմատի որենսդրքով և ՀԱՄԽ-ի համաձայնությամբ իրավունք և արվում չտփահաս կտնանց գիշերալին աշխատանք տալ այն արտադրություններում, վորտեղ դա խիստ անհրաժեշտություն եւ։

Միանդամայն արգելվում և գիշերալին արտաժամյա աշխատանք տալ հղի կամ ծծկեր լերեխաներ ունեցող կանանց։ Այդպիսի կանանց նկատմամբ Աշխատությունը հատուկ արտօնություններ և սահմանում, այսպես՝ Փեղիկան աշխատանքով զբաղված կանայք աշխատանքից ազատվում են ծննդաբերությունից 8 շաբաթ առաջ և 8 շաբաթ հետո և այդ ժամանակամիջոցին իրենց աշխատավարձն ստանում են ապահնակրկից։ Դրասենյակալին և մտավոր աշխատանքով զբաղված աշխատավորուհիներն աշխատանքից աղատվում են ծննդաբերությունից 6 շաբաթ առաջ և 6 շաբաթ հետո։ Սակայն, զբասենյակալին և մտավոր աշխատանք

կատարող կանանց վորոշ պըռովեսիաների համար ել,
նկատի ունենալով նրանց աշխատանքի տռանձնա-
հատկությունը՝ Աշխաղկոմատը սահմանել է 8 շաբաթիա
նախածննդարերական և 8 շաբաթիա հետծննդարերական
արձակուրդը։ Հղիության 5-րդ ամսից սկսած աշխատա-
վոր կնոջը, առանց իր համաձայնության, չի կարելի
գործուղել այնպիսի տեղ, վոր իր մշտական աշխա-
տանքի վայրը չեւ Ծծկեր լերեխա ունեցող մարերի
համար, բացի ընդհանուր ընդմիջումներից, սահման-
ված և նաև լրացուցիչ հատուկ ընդմիջումներ՝ լերե-
խային կերակրելու համար։ Ալդ ընդմիջումները տըր-
վում են առնվազն 3 և կես ժամը մի անգամ, իսկ
ընդմիջման տևողությունը կես ժամից պակաս չպիտի
լինի Ընդմիջումների ժամանակը սահմանվում է ներ-
քին կարգ ու կանոններով և լերեխային կերակրելու
ընդմիջումը տրվում է ի հաշիվ բանվորական ժամա-
նակի, այսինքն՝ ալդ ընդմիջումների ժամանակի չա-
փով բանվորական որը կրճատվում է։

16 տարեկանից փոքր անձանց վարձու աշխատան-
քի ընդունելու համար որենքով վորոշ սահմանափա-
կումներ են արված։ Դա նրա համար է արված, վո-
րովինեան փոքրահասակների որգանիզմի վրա ավելի
շատ և ազգում աշխատանքի մասսակարությունը։ Աշ-
խատավորությանը փոխարինողների առողջությունն
առլահովելու նորառակով Աշխարինսգիրքը բոլորովին
արգելել է աշխատանքի ընդունել 16 տարեկանից
փոքր անչափահասաներին։ Միմիայն բացառիկ դեպքե-
րում, աշխատանքի տեսչի թուլլովությամբ թուլատըր-
վում է աշխատանքի ընդունել 14—16 տարեկան անչա-
փահասաներին։ Այսպիսով, 16 տարեկանից փոքր բոլոր

անչափահասներն աշխատանքի մտնելիս պետք եռունենան աշխատեչի թուլլովությունը: Աշխատանքի տեսուչն ել, հատուկ հրահանգի հիման վրա, ալդ թուլլովությունը տալիս ե միայն այն դեպքում, իբրև անչափահասի նլութական դրությունն այնքան վատ ե, վոր նրան աշխատանքի չընդունելն ավելի վատ կաղզի նրա առողջության վրա, քանի թե աշխատանքը: Այդ դեպքերումն ել, ի հարկե, նկատի լի առնվում անչափահասի ֆիզիկական զարգացումը, այն աշխատանքի բնություն ու պայմանները, վորի համար ընդունվում ե այդ անչափահասը:

Ավելորդ ե ասել, վոր 16 տարեկանից փոքր անչափահասները, համաձայն Աշխորենսգրքի 136-րդ հոդվածի, կարող են աշխատանքի ընդունվել միմիայն կրծառ բանվորական որով: Բացի ալդ, փոքրահասակների համար մի շարք ալլ արտօնություններ ել են սահմանված: Փոքրահասակներն արձակուրդ ստանում են վոչ թե չափահասների նման շաբաթ, ալլ մի ամսից վոչ պակաս: Ներքին կարգ ու կանոնների մեջ հատկապես վորոշված պիտի լինի փոքրահասակի բանվորական որվա սկիզբը, վորը պետք ե հարմարեցրած լինի տեղական պայմաններին, փոքրահասակի դպրոց հաճախելու ժամերին և այլն:

ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի անելիքների մեջ ե մտնում նաև՝ հսկել իրենց ձեւնարկության մեջ աշխատանքի ստուխարտ-առողջապահա-

կան պարմաններին։ Առողջ աշխատանքն ամենից առաջ պահանջում և շրջապատի մաքրություն։ Վորտեղ մաքրություն չկա, այնտեղ աշխատանքն իր սեփական լիսասակարությունից ավելի լե բարդանում։ Այնտեղ սանգորներն ավելի հաճախ են հիվանդանում և աշխատանքի արտադրողականությունն ավելի ցած և լինում։ Այս ամենը սերտորեն կապված են իրար հետ։ Կեղտի և ողափոխության վատ պայմանների զեմ պարքարելը Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքների մեջ խոշոր տեղ պիտի գրավի։ Այդ աշխատանքի մեջ պիտի քաշվին բանվորների ու բանվորուհիների ամենալայն խավերը, վորովհետև դա անմիջականորեն վերաբերում և բոլորին, ովքեր աշխատում են ձեռնարկության մեջ։

Այդ ասպարիզում Աշխաղաշտպանության հանձնաժողովի անելիքները չափազանց շատ են։ Ի հարկե, ամեն մի ձեռնարկություն ունի իր առանձնահատկությունները։ Կան այնպիսի աշխատանքներ, վորոնց ընթացքում կեղառավում են գործիքները, դադլահը, հատակը, բանվորի հագուստը և այլն։ Կան և ավելի քիչ կեղառատող աշխատանքներ։ Աշխատանքի յուրահատուկ պայմաններին համաձայն փոխվում են և Աշխաղաշտպանության հանձնաժողովի հսկողությունը և նրա աշխատանքը՝ սանիտարա-առողջապահական ասպարիզում։

Ամենից առաջ Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը հետաքրքրվում և ձեռնարկության շենքի դրությամբ։ Վորքան շենքը լայն է, վորքան ընդարձակ է, բարձր, լուսավոր, այնքան հեշտ և աշխատել, այնքան ել հեշտ և այդ շենքում մաքրություն պահ-

պանել և ալին։ Շենքից պետք ե հեռացվեն այն բոլոր
առարկաները, վորոնք անմիջական կատ չունեն այդ
շենքում կատարվող աշխատանքների հետ։ Այդ բանի
հսկողությունը մտնում է Աշխաղտպանության հանձ-
նաժողովի անելիքների մեջ, իբր նա զբաղվում է աշ-
խատավայրի շենքի հալցերով։

Ջմեռը Աշխատանքի պաշտպանության հանձնաժո-
ղովը հետեւմ և շենքի տաքության աստիճանին։
Ցուրտ շենքում ավելի դժվար և աշխատել, ավելի քիչ
կարելի յե արտադրել և ավելի շուտ կարելի յե մրսել
և հիվանդանալ։ Այդպիսի դեպքերում, յեթե ձեռնար-
կության վարչությունը համադում և և չի ուզում շեն-
քի տաքության աստիճանը վորոշ նորմայի հասցնել
պետք և դիմել աշխատանքի տեսչին։

Շենքի տաքության նորման յուրաքանչյուր առան-
ձին դեպքում և յուրաքանչյուր առանձին վայրում սահ-
մանում և աշխատանքի տեսուչը, վորի համար նրան
պետք և հրավիրել ձեռնարկություն։

Ձեռնարկության առանձնապես հիվանդությունը
ողափոխությունն եւ կան աշխատանոցներ, վորտեղ
աշխատանքի ընթացքում առաջանում են վնասակար
վոշի, գաղեր, գոլորշիներ և ալին։ Տնավարի սարքած
ողափոխությունն ոգնել չի կարող։ Հարկավոր և ստեղ-
ծել արտաձիգ (ԵՎԻՏՅԱԿԱՅԱ) ողափոխություն, վորը,
ձիշտ և, հաճախ բավական թանգ և նստում, սակայն
բանվորների առողջությունն ավելի թանգ և նստում
ձեռնարկությանը, տպահովագրական գանձարկղին և
ընդհանրապես ամբողջ պետությանը։ Ահա թե ինչու
ողափոխության հարցերում Աշխատանքի պաշտպա-
նության հանձնաժողովն արթուն պահակ պիտի լինի

այն ձեռնարկություններում, վորտեղ առաջանում են ֆլասակար փոշի, գաղեր, զոլորչի և ալին և պիտի պահանջի կառուցել արտածիդ ողափոխություն, այսինքն՝ այնպիսի հարմարություն, վորը մի կողմից աշխատանոցից դուրս և քաշում կեղտուտ ողը, ֆլասակար փոշին, գաղերը և ալին, իսկ մլուս կողմից դրսից ներս և քաշում մաքուր ողը:

Բացի վերոհիշյալից, հանձնաժողովը հետեւում է, վոր գործարանի շենքում առատ խմելու ջուր լինի: Դրա համար պահանջվում է, վոր ձեռնարկությունը ունենալ ջուր յեռացնելու տեղ և բավարար քանակությամբ մաքուր ջրամաններ, յեռացրած ջրով:

Խոշոր վնաս և հասցնում նաև այն բանը, յերբ բանվորներն աշխատանքի ժամանակ թքում են վորտեղ պատահում են Աշխաղաշտպանության հանձնաժողովը հետեւում է, վոր աշխատանքի բոլոր վալրերում դրված լինեն թքամտններ և վոր արդ թքամտնները մաքուր պահվեն:

Այսեն մի աշխատանք ել կեղտոտում և բանվորի ձեռքերը, հաճախ նույնիսկ յերեսն ու գլուխը: Վորոշ աշխատանքներ շատ են կողառոտում բանվորին: Այդպիսի դեպքերում Աշխաղաշտպանության հանձնաժողովը հետեւում է, վոր Աշխաղաշտպանության հավաքական պարմանազրի համաձայն բանվորին սապոն տրվի:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱԳՈՒՍ ՅԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ

Ծառ գործարաններում աշխատանքի ընթացքում առաջացող մըից, խոնավությունից, թույներից և դժբախտ դեպքերից բանվորներին ապահովելու համար

պետք և նրանց տրվի հատուկ բանվորական հաղուստ,
հատուկ սնունդ և հատուկ հարմարություններ, առանց
վորոնց, բանվորների առողջությանն ու կյանքին կա-
րող և վտանգ սպառնալ:

Այդ բոլոր նախազգուշական միջոցները նախա-
տեսնված են Աշխարենսգրքի 139—142 հոդվածներով
(տես ցածր): Ի զարգացումն Աշխարենսգրքի այդ հոդ-
վածների, Աշխարենսգրքի արդյունաբերու-
թյունների մասին մի շաբք պարտադիր վորոշումներ
և հրատարակել, վորոնք վորոշում են, թե վհրատեղ,
ինչ աշխատանքի մեջ և ինչքան ժամանակով պետք
և տրվի մասնագիտական հագուստը, տկնոցները, դի-
մակները, սապոնը, ինչ աշխատանքների մեջ և ինչ
չափով պիտի բանվորներին վորապես հակաթուկն տրվի
ըուղ, կաթ և այլն:

Աշխատապահնության հանձնաժողովի անելիքների
մեջ և մտնում հետևել, վոր Աշխարենսգրքի այդ բո-
լոր վորոշումները իրոք լիովին կիրառվեն ձեռնար-
կության մեջ: Դրա համար, իհարկե, իրենք հանձնա-
ժողովները պիտի լավ ծանոթանան այդ վորոշում-
ներին:

Հանձնաժողովների անելիքների մեջ և մտնում հե-
տևել, վոր իր ժամանակին տրվի այդ մասնագիտա-
կան հագուստը և վոր այդ հագուստը պիտանի լինի
կատարելիք աշխատանքի համար:

Վորտեղ մասնագիտական հագուստ տրվում և մեծ
թվով բանվորների, Աշխատապահնության հանձնա-
ժողովը պիտի հետևի, վոր շինված լինեն հատուկ
հանդերձարարաններ, վորտեղ աշխատանքի լիկող բան-
վորները կարողանան պահել իրենց սեփական հա-
գուստը:

Մասնագիտական հագուստ ստանում են վոչ միայն չտփահաս բանվորները, այլ և այն առակերտները, վորոնք տվյալ պրոֆիսիալի չտփահաս բանվորների հետ միենալուն պայմաններում են աշխատում։ Իսկ ժամանակավոր բանվորներն ու ծառալողները նույնպես աշխատանքի անցնելու մոմենտից իրավունք ունեն մասնագիտական հագուստ ստանալու։ Այն դեպքերում, եթե ժամանակավոր բանվորները հրավիրված են շաբաթից վոչ ավելի ժամանակով, նրանց պետք է տրվի ամենաանհրաժեշտ մասն։ Հագուստը, այսինքն՝ այն նախազգուշական հարմարությունները, առանց վորոնց տվյալ ցեխում կամ արհեստանոցում տշխատել հնարավոր չեն և վորոնք անհրաժեշտ են արտադրության վաճանգներից ապահովվելու համար, որինակ՝ ուսպիրատորներ, ակնոցներ, ձեռնոցներ (թթվուտների հետ աշխատանք կատարելիս):

Մասնագիտական հագուստը բանվորին պիտի տրվի կարված, պատրաստ գրությամբ և բանվորն ել պիտի գործ ածի միայն աշխատանքի ընթացքում։ Բանվորին տրված մասնագիտական հագուստը ձեռնարկության կամ անտեսության սեփականությունն ե մնում, դրա համար ել, բանվորը աշխատանքից կրճատվելու դեպքում իր մոտ լեզած մասնագիտական հազուստը պիտի վերադարձնի ձեռնարկությանը։ Արդելված ե մասնագիտական հագուստը կամ նախազգուշական առարկաները գործարանի կամ ֆաբրիկայի սահմաններից դուրս տանել կամ ոգտվել գրանցից վոչ իր պարականությունները կատարելիս։ Սակայն վորոշ դեպքերում մասնագիտական հագուստը ձեռնարկությունից դուրս տանել թույլատրվում ե այն բանվորներին, վո-

բոնք կամ իրենց աշխատանքի բնուլթի պատճառով
աշխատանքի վորոշակի տեղ չունեն, այսինքն՝ աշխա-
տում են ձեռնարկությունից դուրս, կամ թե չունեն
հագուստը պահելու, կամ շորերը փոխելու համազա-
տասխան հարմարություն։ Վորպեսզի հնարավորու-
թյուն լինի շորերը փոխել և մասնագիտ։ հագուստից
ոդտվել միայն աշխատանքի ընթացքում, վարչու-
թյունը ոկտօք և առաջին պահարաններով հանդերձա-
րան շինել տա։ Այդպիսի հանդերձարաններ պետք և
շինել 50-ից ավելի բանվոր ունեցող արդյունաբերա-
կան ձեռնարկություններում։ Վորտեղ բանվորների
թիվը 50-ից պակաս ե, հատուկ հանդերձարան շինելը
պարտադիր չե, Սակայն հենց աշխատանոցում, ար-
հեստանոցում ամեն մի բանվորի համար պիտի շինվի
առանձին փոքրիկ պահարան, կողպելու հարմարու-
թյամբ։

Յեթե տրված մասնագիտական հագուստի պիտանի-
ության մասին վեճ և ծոգում, այդ վեճը պիտի լուծի
ԳԿՀ-ն, իսկ լեռը ԳԿՀ-ումն ել համաձայնություն չկա-
յացավ, այդ վեճը վերջնականապես լուծում և աշխա-
տանքի տեսուչը։

Մասնագիտական հագուստի ամենամի առարկան
տրվում և վորոշ ժամանակամիջոցի համար, այն ժա-
մանակամիջոցի, վոր սահմանված և Աշխաղողկոմատի
կողմից։ Սակայն դեպքեր են լինում, վոր մինչև այդ
ժամանակամիջոցի լրանալը մասնագիտական հագուստ-
ը կամ նախազգուշեկան հարմարությունները ան-
պետքանաւ են։ Այդպիսի դեպքերում, յնթե փաստո-
րեն ապացուցվում է, վոր մասնագիտական հագուստը
դորժածության համար անպետք է (դա անում է

Գկէ-ն), ժամանակը լրանալուց տուշ անպետքացած ժամն. հագուստը փոխարինվում ե նորով: Յեվ ընդհակառակը, լիթե ժամանակը լրանալուց հետո մասնագիտ հագուստը դեռևս գործածության համար պիտանի լի (զա ևս վորոշում ե Գկէ-ն), կարելի լի նույն հագուստը նորից տալ բանվորներին, նոր ժամանակամիջոցով:

Բանվորներին ու ծառալողներին տրվող բոլոր առարկանները (մասնագիտ, հագուստ, նախաղղուշական առարկաններ) ցուցակագրվում են նրանց հաշվեկըրքութիւններում: Տեղական պայմաններին ու տվյալ արտադրության առանձնահատկություններին համաձայն մի տեսակի մասնագիտական հագուստը մի ուրիշ տեսակով փոխարինել կարելի լի միտքն համապատասխան տնտեսական ու պրոֆմիութենական մարմինների փոխագարձ համաձայնությամբ և Աշխատանքի բաժնի թուլտվությամբ:

Բանվորը արձակվելու կամ իր կամքով հեռանալու դեպքում պարտավոր ե հանձնել իրեն տված իրերը, հակառակ դեպքում նրանց արժեքը կպահվի նրա այն աշխատավարձից, վոր հասնում ե նրան հեռանալու մոմենտին: Այդպիսի դեպքերում բանվորից ստացվելիք իրերի գնահատությունը կատարում ե Գկէ-ն, վոչ թե նրանց սկզբնական գների, այլ համաձայն նրանց հետագա ոգտագործելիության աստիճանին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մեր դործարաններից ավելի ու ավելի յէ դուրս
մղվում ձեռքի աշխատանքը։ Նրա տեղը բռնում են
բարդ մեքենաները։ Եեվ վորքան շատ մեքենաներ են
դրվում գործարաններում ու ֆաբրիկաներում, այն-
քան ավելի շատ դժբախտ դեպքեր են պատահում այդ
մեքենաների վրա աշխատող բանվորների հետ։ Այդ
դժբախտ դեպքերի հետևանքն այն և լինում, վոր կամ
բանվորը հիվանդանում և ու իերկար կամ կարճ ժա-
մանակով հեռանում և զարքերից և կամ բոլորովին
հաշմանդամ և դառնում։ Պատահում և նաև, վոր դժբ-
բախտ դեպքերը բանվորների մահվան պատճառ են
դառնում։

Վերջին ժամանակներս դժբախտ դեպքերի դեմ պայ-
քարելու գործին միծ ուշադրություն և դարձվում։
Ամենից առաջ հենց ձեռնարկության բացվելու ժամա-
նակ աշխատանքի տեսուչը թուլլություն չի տալիս,
մինչև չի համոզվում, վոր այդ նոր գործարանում կամ
դաշտում բոլոր մեքենաները ճիշտ են սարքավորված
և ապահովված են համապատասխան միջոցներով։

Բայց նույնիսկ նստիաղգուշական միջոցներ ձեռք
առած դեպքերումն ել բանվորը կարող և զոհ դառնալ
իր տնշնորքությանը կամ այս կամ այն մեքենաների
հետ վարվել չգիտենալուն։ Դրա համար ել աշխա-
տանքի տեսչությունը և Աշխատանքի պաշտպանու-
թյան հանձնաժողովը հետևում են, վոր բանվորին
թուլլ չտան այս կամ այն մեքենալի վրա աշխատել,
մինչև վոր նա չծանոթանա այդ մեքենալի կառուց-
վածքին։ Դրա համար վարպետը պիտի առաջուց հրա-

հանգներ տա բանվորին, ապա սոսուշի, թե բանվորն
ինչ չափով և սովորել մեքենալի հետ վարվելու բոլոր
ձեերը։ Այս հարցում բանվորի գիտակից լինելը մեծ
զեր և խաղում։ Վորքան բանվորը գիտակցաբար և
մոտենում իր աշխատանքին, այնքան ավելի քիչ դժ-

րախտ գեղքեր կպատահեն նըտն։
Պետք և բանվորին բացատրել, վոր աշխատանքին
անփութ վերաբերվելը հաճախ մնաս և բերում վոչ
միայն իրեն՝ բանվորին, այլ և իր ընկերներին ու
տմրողջ արտադրությանը։ Այդ ուղղությամբ պիտի
կըթել գաստիարակել բանվորներին և այդ դործն
ընկերում և անվատանդության բջիջների վրա, վորոնք
կազմակերպվում են խռովը գործարաններում ու ֆաբ-
րիկաններում։ Այդ բջիջների մեջ պիտի քաշել վոչ
միայն բանվորներին, այլ և տեխնիկներին, վարպետ-
ներին և ցեխների ու արհեստանոցների ղեկավար-
ներին։

Այդ բջիջների անելիքների մեջ և մանում — մշակել
այն բոլոր միջոցները, վորոնք կարող են անվտանգ
դարձնել մեքենաների վրա աշխատելը և կարող են
պակասեցնել դժբախտ գեղքերի թիվը։ Ինարկի, գոր-
ծարանի կամ ֆաբրիկայի վարչությունը պարտավոր
և բոլոր դժբախտ գեղքերի մասին անմիջապես տե-
ղեկացնել աշխատանքի տեսչությանը։ Դա արվում և
«Տեղեկություն դժբախտ գեղքի մասին» կոչվող թեր-
թիկը լցնելով։ Աշխատավանդության հանձնաժողովը
հետեւում և, վոր այդ տեղեկությունն իր ժամանակին
ուղարկվի աշխատանքի տեսչության։

Ամեն անգամ դժբախտ գեղք պատահելուն պես
անմիջապես պիտի կանչել «շտապ ոզնությունը» և

պետք ե տեղեկություն տալ շրջանավիճ աշխատանքի տեսչին: Յեվ յերբ աշխատեսուչը գա դեպքի վայրը, Աշխաղաշտպանության հանձնաժողովը ամեն կերպ պիտի ոգնի նրան քննություն կատարել և պարզել պատահած դժբախտ դեպքի պատճառերը:

ՀԱՇՎԵԳՐՔՈՒՅԿԱՆԵՐԸ

Վորպեսզի աշխատանքային պայմանագրերի կետերը պարզ լինեն, վորպեսզի հետազայում վարձողի և վարձվողի միջև վարձման պայմանների շուրջը ծագած վեճերը լուծելը հեշտ լինի, որենքը պարտադիր և դարձբել վոր վարձողը վարձվողին հաշվեգրքույկ տա:

Աշխատանքի պայմանների մասին կարելի յե համաձայնության դալ բանավոր կերպով, սակայն վարձողը պարտավոր ե անպատճառ այդ պայմանները գրել հաշվեգրքույկի մեջ, ստորագրել և տալ վարձվողին: Հետազայում վարձողը պարտավոր ե այդ գրքույկում նշանակել իր տված աշխատավարձը, նշանակել, թե յերբ ե տվել հերթական ու լրացուցիչ արձակուրդը, ինչպես և այն, թե ինչ մասնագիտական հագուստ և ավել վարձվողին: Հաշվեգրքույկ տալը պարտադիր չե, յեթե աշխատանքի պայմանագիրը կնքվել ե մի շաբաթից վոչ ավելի ժամանակով: Հաշվեգրքույկ պետք ե տրվի ամեն մի աշխատավորի: Յեթե վարձողը աշխատանքի պայմանագիր ե կնքել ամբողջ արտելի հետ, ապա նոտ պարտավոր ե մի ընդհանուր հաշվեգրքույկ տալ ամբողջ արտելին և բացի այդ, արտելի ամեն մի անդամին առանձին առանձին:

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Աշխատանքի որենսգրքով սահմանված են այն հիմնական նորմաները, վորոնք կարգավորում են աշխատանքն ու վարձողի և վարձվողի փոխհարաբերությունները։ Աշխատանքի Որենսգրքով հիշված նորմաները այն նվազագույն ապահովությունն է, վորորենքով արգում և աշխատավորությանը։ Վորակս Աշխատանքի Որենսգրքի լրացում, աշխատավորության իրավունքները պաշտպանող մարմինները։ Աշխատանքի Փողովըդական կոմիսարիատը և Աշխատանքի բաժինները հրատարակում են պարուադիր վորոշումներ, վորոնք ավելի պարզում ու խորացնում են Աշխատանքի մեջ հիշված որենքները։ Բացի արև, տրհեստակցական կազմակերպություններն աշխատավորուների անունից հավաքական պայմանագրեր են կնքում վարձողների հետ, վորոնցով հաճախ աշխատավորության համար ավելի լույս պայմաններ են ստեղծում, քան թե Աշխատանքով և սահմանված։ Սակայն հավաքական պայմանագիրն ել չի կարող ընդգրկել աշխատանքի ըոլոր բազմազան կողմերն ու վաճառողի և աշխատավորի միջև յեղած փոխհարաբերությունների խնդիրները։ Դրա համար ել որենքով սահմանված է, վոր արենուատակցական մարմինների ու ձեռնարկության վարչության համաձայնությամբ կազմվեն ներքին կարգ ու կանոնները, վորոնք ավելի կպարզաբանեն վարձողի ու աշխատավորության մեջ յեղած պայմանագրային հարաբերությունները և կկարգավորեն ձեռնարկության ու հիմնարկության մեջ յեղած բոլոր աշխատանքային հարցերը։ Աշխատանքի Որենսգրքի

համաձայն ալբակիսի ներքին կարգ ու կանոններ պիտի կազմվեն այն բոլոր ձևունարկությունների ու հիմնարկությունների համար, վորտեղ օ հոգուց վոչ պակաս աշխատողներ կան: Այդ կանոնները մշակում են վարչությունը կամ գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովը, սակայն որինական ուժ են ստանում միայն միության հետ համաձայնեցնելուց և աշխատանքի տեսչի կողմից հաստատվելուց հետո:

Ներքին կարգ ու կանոնները ձեռնարկության մեջ աշխատողների համար պարտադիր են միայն այն դեպքում, յեթե նրանք հրատարակված են վերոհիշտալ կարգով և յեթե այդ ամենը լայն կերպով հայտնված ե բոլոր աշխատավորներին: Սովորաբար դա արվում ե աշխատանքի բոլոր վայրերում և աչքի ընկնող տեղում կանոնների թերթը կախ տալու միջոցով: Իհարկե, ներքին կարգ ու կանոնները չեն կարող հակասել վոչ աշխատանքի որենքներին, վոչ Աշխատողկոմատի մարմինների վորոշումներին և վոչ ել դեմ կարող են լինել տվյալ ձեռնարկության մեջ գործող հավաքական պայմանագրին: Ներքին կարգ ու կանոնների նպատակն ե միայն՝ մանրամասնորեն վորոշել աշխատանքի պայմանները, ավելի մանրամասնորեն վորոշել ձեռնարկության, Փարբիկալի, գործարանի, համքարության, արհեստանոցի և այլնի ներքին կարգ ու կանոնները: Այն հիմնարկություններում, վորտեղ դեռևս ներքին կարգ ու կանոնները մշակված չեն, միության և ձեռնարկության վարչության համաձայնությամբ, մինչև կանոնների մշակելը, գործում են այն որինակելի կարգ ու կանոնները, վոր հրատարակել և Աշխատողկոմատը ՀԱՄԽ-ի և Ժողոտնախորհի համաձայնությամբ:

Ներքին կարգ ու կանոնների կիրառումը պարտադիր ե ինչպես աշխատավորների, այնպես ել վարչության համար։ Ներքին կարգ ու կանոնները խմբարկվում են կարգապահական պատասխանատվության։ Այդ կանոնների պարբերացար խախտման հետևանքը կարող ե լինել այն, վոր աշխատավորը կարծակվի իր պաշտոնից՝ այսինքն՝ վարչությունը կարող ե զանց առնել աշխատանքային պայմանագիրը։

Ներքին կարգ ու կանոնների մշակումը չափազանց լուրջ գործ ե, վորին պետք ե մտանակցի Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը։

Ինչպես արդեն վերև ասացինք, Ներքին կարգ ու կանոնների նախագիծը քննվում և հաստատվում ե Գնչէ-ի կողմից։ Սակայն մինչև այդ նախագիծը գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը՝ նպատակահարմար և մշակել ներքին կարգ ու կանոնների բոլոր կետերը, պլավորապես նրանք, վորոնք վերաբերում են բանվորական ժամանակին, այսինքն՝ աշխատանքի դալու և աշխատանքից գնալու ժամերին, ընդմիջումներին, արտաժամյա աշխատանքներ կատարելու կարգին, ծծկեր յերեխա ունեցող մալրերի համար սահմանված ընդմիջումներին, և կանոնների այն բոլոր կետերին, վորոնք կարգավորում են մեքենաներ ստանալու, պահելու և մեքենաների ու գործիքների հետ վարդելու խնդիրները, ինչպես և կանոնների այն կետերը, վորոնք վերաբերում են նախազգուշական միջոցներին և աշխատանքի սահմարտառառողջապահական պայմաններին՝ ձևնարկության մեջ։

Այս որինակելի կարգ ու կանոնները հրատարակել են ՍՀՄ-ի Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատը ՀԱՄԿԻ և ԳԺԾԽ-ի համաձայնությամբ։ Ներքին կարգ ու կանոնների նոր որինակելի ձևերը հրատարակած են «Տրու» թերթում (Պօտ. ՀԿՏ. № 185, 19/VII, 1927 թ.):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի աշխատանքների մեջ պակաս տեղ չեն բռնում նաև սացիալական ապահովագրության խնդիրները։ Սոցիալական ապահովագրության խնդիրների մեջ և մտնում դրամական և բուժական ոգնություն ցույց տալ բանվորներին ու ծառայողներին, նրանց հիվանդության, հաշմանդամության և այլ դեպքերում։ Սոցիալական ապահովագրության հիմունքները պարզաբանված են Աշխատանքի 175—192 հոդվածներում։

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի անելիքներն են.

1. Հետևել, վոր բոլոր նոր աշխատանքի մտնողներն իր ժամանակին ստանան ապահովագրական գրքույկներ կամ ապ. վկայականներ բուժական ոգնություն ստանալու համար։

2. Հանրամատչելի կերպով մանրամասն տեղեկություններ տալ աշխատավորությանը, թե բանվորներն ու ծառայողները սոց. ապահովագրության ինչ իրավունքներ ունեն և ինչպիսի ոգնություն ու նպաստ են տալիս ապահովամարկեղները, ինչպես և ինչ դեպքում

բանվորը կամ ծառակողը կարող և ոկտագործել իր սոցապահովագրական իրավունքները:

3. Հետեւ, վոր գործարանի, Փաքրէկալի կամ հիմնարկության վարչությունը իր ժամանակին ապգանձարկղ ուղարկի բոլոր հաշվեթերթերի պատճենները և իր ժամանակին ապգանձարկղ մուծի ապահովագրական տոկոսները:

4. Հետեւ, վոր ապգանձարկղից արձակուրդ ունեցող հիմնադներն աշխատանքի չզնան և ճշտորեն կատարեն բժշկի տված խորհուրդներն ու կարգադրությունները:

5. Ագնել ապգանձարկղին սիմուլանտների գնմագրաբելու գործում, վորոնք ապգանձարկղից իզուր տեղը գումարներ են ստանում:

6. Մասնակցել ապգանձարկղի բուժական հիմնարկներին կից հատուկ վարչության ու անահետական հանձնաժողովներին:

7. Մասնակցել սոցապահովագրության բոլոր կոնֆերենցիաներին ու խորհրդակցություններին:

8. Ակտիվ մասնակցել ապգանձարկղի գործունելուան մասին տված զեկուցման քննությունը, ապգանձարկղի կոմիտեների ընտրություններին և այլն:

Սովորաբար ամեն մի քաղաքում ամեն մի առանձին ապահովագրական գանձարկղ սահմանում և այն կարգը, վորով ապահովագրվածներին նպաստ և կենսաթոշակ և տալիս ինարկե, ընդհանուր առմամբ այդ կարգը միննույնն և բոլոր ապգանձարկղների համար, բայց կտրող են լինել վորոշ մանրամասնություններ, վորոնցով մի գանձարկղում ընդունված կարգը կատարերկի մյուսից, Յուրաքանչյուր առանձին ապահովա-

գրական գանձարեկղ՝ բոլոր ապահովագրվածներին հայտարարում և իր սահմանած կարգը, վորով վճարում և զանազան տեսակի նպաստներ ու կենսաթոշակներ:

Ստորև մենք միքանի տեղեկություններ ենք տալիս սոցիալական ապահովագրության մասին:

Ո՞Վ Ե ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ

Աշխատանքի Որենսգրքի համաձայն սոցիալական ապահովագրությունը տարածվում և բոլոր վարձու աշխատանք կատարողների վրա, անկախ նրանից, թե հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունն իր վարձու աշխատավորի համար վճարման և ապահովագրական տոկոսներ, թե վոչ: Այստեղից պարզ է, վոր ապահովագրված են համարվում բոլոր բանվորները, բանվորուհիներն ու ծտուայողները, վորոնք վարձու աշխատանք են կատարում ինչպես պետական ու կոռպերատիվ ձեռնարկություններում, այնպես ել մասնավոր անձանց մոտ և ապահովագրված են համարվում այն որից, ինը անցել են աշխատանքի: Այստեղ նշանակություն չունի այն հանդամանքը, թե նրանք մշտակմն աշխատանքի լեն մտել, վորպես աշտկերտ են գնացել, թե մտել են ժամանակավոր աշխատանքի: Քանի վոր աշխատավորի և աշխատանք տվողի միջև կնքվել ե աշխատանքի պայմանագիր, աշխատավորն արդեն համարվում և ապահովագրված և իրավունք ունի սոցիալական ապահովագրության իրավունքներից ոգտվելու: Սեղոնային և ժամանակավոր բանվորներին ապահովելու, այսինքն՝ նպաստներ տալու և զանազան տեսակի ապահովագրական ոգնու-

թլուն ցուցը տալու կտրդը սահմանված և առանձին
կանոններով:

Ստորև մենք կխօսենք այն առահովագրական կար-
գի մասին, վոր տարածվում և մշտական աշխատանք
տանողների վրա:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՉԱՐԿԴՐ Ի՞ՆՉ ԴԵՊԲԵՐՈՒՄ Ե ՈԴՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑՑ ՏԱԼԻՄ

Առահովագրական գանձարկդը ապահովագրվածին
ապահովում և այն բոլոր դեպքերում, յերբ նա զըրկ-
վում և աշխատավարձից կամ ժամանակավոր անաշ-
խատունակության պատճառով (հիվանդություն, հաշ-
մություն, հղիություն, կարանտին, հիվանդին խնա-
մելու ժամանակամիջոց), կամ մշտական անաշխատու-
նակության պատճառով (հաշմանդամություն) և կամ
զործադրկության պատճառով: Բայցի այլ տպան-
ձարկդը ոգնություն և ցուցը տալիս նաև այն ապա-
հովագրվածների ընտանիքներին, վորոնք զրկվել են
կերակրողից (թոշակ):

Բայցի վերը հիշած գանազան տեսակի դրամական
ոգնությունից, ապահովագրական գանձարկդը ցուցը և
տալիս նաև բուժական ոգնություն, տալով ձրի բժըշ-
կական ոգնություն, սահմատորիաների ու հիվանդա-
նոցների ձրի բժշկություն, ձրի դեղորայք, ատամնա-
բուժություն և այլն:

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ Ե ՆՊԱՍՏՐՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐ

Վերը մենք ժամանակավոր անաշխատունակության
որինակներ բներինք: Այդ վեպքերն են—հիվանդու-

թլունը, հաշմությունը, հղիությունը (ծ կամ 6 շաբաթ մինչև ծննդաբերությունը), մալրությունը (ծ կամ 6 շաբաթ ծննդաբերությունից հետո), հիվանդին խնամելը, կարանտինը (մեկուսացում հիվանդություններ չտարածելու համար): Բոլոր այս դեպքերում ապահովագրական գանձարկղը նպաստ տալիս ե ապահովագրվածի փաստացի, իրական աշխատավարձի չափով:

Ստկակն, ժոմանակավոր անաշխատունակության առթիվ նպաստ ստանալու համար պիտք ե կատարել այն կանոնները, վոր ալդ մասին սահմանել են սոցիալական ապահովագրության մարմինները: Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է միայն հիվանդանոցային թերթիկներով: Բուժարանացին բժշկության դեպքում թերթիկը տալիս ե բուժարանի այն բժիշկը, վորը բժշկում և տվյալ ապահովագրվածին, տանը բժշկվելու դեպքում թերթիկը տալիս ե տանը բժշկող բժիշկը, հիվանդանոցում բժշկվելու դեպքում թերթիկը տալիս ե այն հիվանդանոցը, վորոտեղ պառկած ե հիվանդը, հղիության դեպքում թերթիկը տալիս ե բժշկական վերահսկիչ հանձնաժողովը, վորին պիտի դիմե հղի բանվորութին: Ընտանիքի հիվանդ անդամին խնամելու առթիվ հիվանդանոցային թերթիկ ստանալու համար ել անհրաժեշտ ե ստանալ ապահովագրվածին բժշկող բժշկի կամ բուժարանի յեղակացությունը, վորից հետո բժշկական վերահսկիչ հանձնաժողովը տալիս ե հիվանդանոցային թերթիկը: Կարանտինի դեպքում, այսինքն՝ յերբ տանը սուր-վարակիչ հիվանդություն լերևալու պատճառով արգելվում ե տանից դուրս գալ, հիվանդանոցային թերթիկ տալիս ե բժշկական վերահսկիչ հանձնա-

ժողովը, նախապես ստանալով սանիտարական բժշկի, կամ ապահովագրվածին բժշկող բժշկի լեզրակացությունը: Հիվանդանոցային թերթիկը դրամական փաստաթուղթ ե, զրա համար ել խստորեն պիտի հետեւ, վոր նրա մեջ չնշումներ և ուղղումներ չլինեն և վոր վավերացրած լինի այն հիմնարկության ստորագրություններով ու կնիքով, վորտեղից ստացվել ե հիվանդանոցային թերթիկը: Յեթե այդ ձևականությունները կատարված չլինեն, ապահովագրական գանձարկը ալգոխի թերթիկով վոչինչ չի վճարի: Բացի բուժական հիմնարկության կամ բժշկի նշանառումներից՝ հիվանդանոցային թերթիկի վրա նշանառումներ ե անում նաև ձեռնարկությունը, ձեռնարկությունը հիվանդանոցային թերթիկի վրա նշանակում ե, թե ապահովագրվածը լնրը և զադարեցրել աշխատանքը, անաշխատումակությունից առաջ վերքան աշխատավարձ եր ստանում, վնր կարգով ու գրուգրով ե ստանում և լնրը և ապահովագրվածը աշխատանքը վերսկսել: Այս բոլոր անդեկությունները նույնպես հիվանդանոցային թերթիկի վրա պիտի վավերացված լինեն ձեռնարկության կողմից ստորագրությամբ և կնիքով: Այն դեպքերում, չերք բժշկական վերահսկիչ հանձնաժողովի կարգադրությամբ ապահովագրվածին հիվանդության պատճառով արձակուրդ ե տրվում, այդ դեպքերում ապգանձարկը այդ արձակուրդի ընթացքում նրան նպաստ ե տալիս նրա իրական աշխատավարձի չափով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԼ

Հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունքից բոլոր աշխատավորներն ել չեն ուստիվում:

Ալսպես, որինակ՝ այն աշխատավորը, վոր հաշմանդամ և դարձել ընդհանուր հիվանդություններից կամ ծերության հետեւանքով (50 տարեկան հասակ ունեցողը) կենսաթոշակ ստանալու իրավունք ունի միայն այն դժուգում, յեթե վտրձու աշխատանք և կատարել 8 տարուց վոչ պակաս:

Այն աշխատավորը, վոր հաշմանդամ և դարձել աշխատանքալին հաշմության կամ պրոֆեսիոնալ հիվանդությունների հետեւանքով, այսինքն՝ այնպիսի հիվանդությունից, վորը տվյալ աշխատավորի աշխատանքի առանձնահատուկ բնույթի հետեւանք և, նաև կենսաթոշակ ստանում և առանց նկատի առնելու 8 տարվա վարձու աշխատանքի ստաժը, միայն այն պայմանով, յեթե հաշմանդամ և դարձել վարձու աշխատանք կատարելու ժամանակ։ Իսկ կենսաթոշակի չափը կախված է նրանից, թե աշխատավորն ինչ չափով և կորցրել իր աշխատունակությունն ու առաջիկա աշխատանքով կամ մի վորեե ուրիշ աշխատանքով զբաղվելու հնարավորությունը։

Բոլոր հաշմանդամները բաժանվում են 6 խմբի։ Նաև, թե տվյալ հաշմանդամը վոր խմբի մեջ և մըսնում, ըստ այնմ ել վորոշվում և կենսաթոշակի չափը։

Այսպես՝ հաշմանդամության առաջին խմբին պատկանում են այն հաշմանդամները, վորոնք վոչ միայն ընդունակ չեն վորեե վարձու աշխատանք կատարելու, այն սովորական կենսական կարիքները բավարելու համար ուրիշի ոգնության կարիքները են դպում։ Յերկրորդ խմբին պատկանում են այն հաշմանդամները, վորոնք թեև իրենք վորեե աշխատանք կատարելու ընդունակ չեն, բայց ուրիշի խնամքի կարիք ել.

չեն զգում: Հաշմանդամների լերը որդ խմբին են պատկանում այն անձինք, ովքեր գոլութլունը պահպանելու միջոցներ կարող են գտնել միայն պատահական և թեթև աշխատանքներից, բայց ստիպված են ընդմիջութափարվել իրենց սովորական աշխատանքից (պրոֆիսիալից) և վոչ մի տեսական աշխատանք տանելու ընդունակ չեն: Զորքորդ խմբին են պատկանում այն հաշմանդամները, վորոնք կարող են շարունակել իրենց պրոֆեսիան, սակայն ավելի ցած աշխատառնակությունը և կամ ստիպված են փոխադրվել մի ուրիշ ավելի ցած վորակ պահանջող աշխատանքի, վորի հետեւանքով նրանց աշխատավարձը իշնում է 30—40% -ով: Հաշմանդամների հինգերորդ խմբին են պատկանում նոույն այն անձինք, ովքեր պատկանում են 4-րդ խմբին, միայն թե նրանց աշխատավարձի իջեցումը կատարվում է 15—30% -ից վոչ ավելի: 6-րդ խմբի մեջ են նրանք, ում աշխատավարձը հաշմանդառթյան հետեւանքով իջել է 15% -ից վոչ ավելի:

Ի՞նչպես վերևում ասացինք, նայած թե տվյալ անձը վոր խմբին և պատկանում, ըստ այնմ ել վորոշվում է ապկանձարկդից տրվելիք կենսաթոշակի և նպաստի չափը, իսկ կենսաթոշակը տատանվում է լրիվ կենսաթոշակի: $1/10$ -րդ մասից (6 -րդ խմբի համար) մինչև լրիվ կենսաթոշակը (առաջին խմբի համար):

ԿԵՆՑԱՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԿՈՌՊԵՐԱՑՈՒՄ

Կոռպերացման լենթարկելու աշխատանքն ել Աշխաշտապահնության հանձնաժողովի պարտականություն-

Ների մեջ և մտնում։ Հանձնաժողովը իրեն նպաստակ պիտի դնի 100 տոկոսով կոռպերացման լենթարկել տվյալ ձեռնարկության մեջ աշխատողներին։ Դրա համար հանձնաժողովը պիտի կապ ստեղծի բանկուայի հետ և նրա միջոցով գեկուցում կազմակերպի կոռպերացիայի նպատակների ու խնդիրների մասին։ Դրանից հետո սկսվում է աշխատավորությանը կոռպերատիվին անդամագրելու, անդամագրքուլիներ տալու և այլ գործնական աշխատանքները։ Հետազայում ել Աշխաղաշտպանության հանձնաժողովը կապ և պահում կոռպերատիվի հետ և մասնակցում և խանութային հանձնաժողովներին։ Աշխաղաշտպանության հանձնաժողովը հետեւում և նաև, վոր կոռպերատիվի անդամները կանոնավոր մուծեն իրենց անդամավճարներն ու փայտավճարները, իեթե այդ մուծումները կատարվում են մաս-մաս։

ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Կոռպերացման աշխատանքի հետ սերտ կապված և և վարկավորման աշխատանքը։ Այդ ասպարիզում հանձնաժողովի առաջ խոշոր աշխատանք և դրված։ Խնչպես յերկարատե, այնպես և կարճատե վարկավորման միջոցով նա հնարավորություն և տալիս իր ընկերներին՝ բարելավել իրենց կենցաղը, գնել անհրաժեշտ կտորեղենն ու կողկեղենը։ Մյուս կողմից անհրաժեշտ և հետեւել, վոր վարկը չափից դուրս շատ չինի, վորպեսզի վարկի դիմաց աշխատավարձից ամեն անդամ պահած գումարները նրա աշխատավարձի վորոշ մասից ավելի չինեն։ Թե չե պատահում և, վոր վերցրած վարկն այնքան շատ և լինում, վոր ա-

մեն անգամ ստանալիք աշխատավարձն ամբողջապես
պահպամ և վարկի դիմաց Դա, ինարկե, աշխատա-
վորին թաղում և պարտքերի մեջ և նրա դրությունը
թեթևացնելու փոխարեն ավելի է վատացնում։ Զա-
փից ավելի վարկ վերցնելու առաջն առնելու համար
պետք է.

1. Առաջուց կազմել վարկավորման ծրագիրը։
2. Խուսափել միքանի հիմնարկություններում վարկ
ստանալուց։

3. Աշխատավորին տրվող վարկը սահմանափակել
ախալիսի գումարով, վոր վարկի դիմաց պահվող գու-
մարը, մըուս հնարավոր պահումների հետ, լերկշարաթ-
յա կամ մի ամսվա ստանալիքի մեկ էերորդից ավե-
լի չլինի։

4. Հետեւել, վոր իր ժամանակին կանոնավոր
կերպով մարեցվի պարտքը։ Դա մի կողմից աշխատա-
վորին հնարավորություն կտա նոր վարկ վերցնելու,
իսկ մըուս կողմից բանկոռպին հնարավորություն
կտա կազմակերպված ձեռվ բաշխել վարկավորման
ֆոնդը։

Հանձնաժողովը կազմում է բոլոր վարկ ստացողնե-
րի համապատասխան ցուցակը, վորի շնորհիվ ել կա-
րողանում և հետեւել վարկն իր ժամանակին վերա-
դարձնելուն և այլն։

Վարկավորման ամբողջ աշխատանքը տեխնիկապես
կատարում և ինքը վարչությունը և վոչ թե գործար-
աեղկոմը կամ Աշխատաշահության հանձնաժողովը։

ՏԱՇԱՐԱՆՆԵՐԻ ՑԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՄՍՈՒՐՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Խոշոր ձեռնարկութիւններում, մանավանդ այն ձեռնարկութիւններում, վորոնք հետու յին քաղաքի կենտրոնից, Աշխատավանութիւն հանձնաժողովի անելիքների մեջ են մտնում նաև ճաշարաններ (կամ նախաճաշիկի բուժետներ) և մանկական մսուրներ կազմակերպելու աշխատանքները։ Այդ աշխատանքը չափաղանց բարդ և կշտ ուժ ու աշխատանք և պահանջում։ Ինարկե, ամենից առաջ ձեռնարկութիւն մեջ ճաշարան կամ մանկական մսուր կազմակերպելու հարցը պիտի վճռվի գործարտեղկոմում։ Անհրաժեշտ է ամբողջ աշխատանքը կապել բանկոպի հետ, վորը արդպիսի գործում մեծ ողնութիւնն կարող և ցույց տալ։ Մսուրներ կազմակերպելիս պետք և համաձայնութիւն գալ համապատասխան մարմինների, առամբնի և այլնի հետ։

ՍԱՆԱՏՈՐԱ-ԿՈՒՐՈՐՏԱՅԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի պաշտպանութիւն հանձնաժողովների ամենալուրջ աշխատանքներից մեկն ել այն ե, վոր նա ոժանդակի բանվորներին ու ծառայողներին՝ սահմատորակուրորտային ոգնութիւնն ստանալու։ Աշխատանքի պաշտպանութիւն հանձնաժողովը ակտիվ մասնակցութիւնն ու ցույց տալիս հիվանդների ընտրութիւնն մեջ՝ հանգստի տուն, սանատորիա կամ կուրորտ ուղարկելու համար։ Սանատորիաներն ու կու-

բորբաները դեռևս չափազանց թանգ արժեն, դրա համար ել շատ քիչ բանվորների ու ծառալողների յէ հաջողվում ողբավել բժշկության այդ ձերց։ Սանատորիա կամ կուրորտ գնալու ցանկություն ունեցողների թիվը միշտ ել շատ տվելի մեծ և լինում այն տեղերի թվից, վոր հատկացվում և տվյալ գործարանին կամ ֆաբրիկալին։ Դրա համար ել Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի համար այնքան ել հեշտ չի լինում պետք լիզած թվով թեկնածուներ ընտրել սահատորիաներ կամ կուրորտաներ ուղարկելու համար։

Ազելի լավ զրության մեջ և հանգստի տների խընդիրը, վորովինեան մեզ մոտ հանգստյան տներ ավելի շատ կան և ավելի եժան են նստում, քան թե սանատորիաներն ու կուրորտաները, սակայն այստեղ ել բոլոր ցանկացող բանվորներին չի հաջողվում տեղ ստանալ։

Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը ստիպված և հանգստյան տուն գնալու ցանկություն ունեցողների մեջ ել ընտրություն կատարել։

Հանգստյան տուն ուղարկվում են միայն հյուծվածները, և վոչ թե հիվանդները։ Հանգստյան տները գործում են գլխավորապես ամառը, դրա համար ել արձակուրդների ծրագիրը կազմելիս հարկավոր են կատի ունենալ, վոր հարմար ժամանակին պետք ե արձակուրդ տալ այն բանվորներին ու ծառալողներին, վորոնք պիտի հանգստի տուն ուղարկելին։

Սովորաբար հանգստյան տուն ուղարկվում են լուրաքանչյուր բանվորի կամ ծառալողի հերթական արձակուրդի ժամանակի։ Հանգստյան տուն ուղարկելու համար ընտրություն կատարվում է իր միության կամ միջմիութենական մարմինների հրահանգի համաձայն։

ՀԱՎԵԼՎԱԾ

ԴՈՐԺԱՐՑԵՂԿԱՄՆԵՐԻՆ ԿԻԹ ԱՇԽԵՏԱՄՆՔԻ ՊԱՅՑՎԵՆՈՒԹԵԱՆ
ՀԵՆՉԵԾՈՂԱՎԻ ԿԱՆՈՆԵԳԴՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ^{*} ՈՒ ԿԱԶՄԸ

1. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը գործարտեղկոմի մարմինն է:

2. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը կազմում և գործարտեղկոմը՝ տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության ակտիվ բանվորներից ու ծառայողներից։ Հանձնաժողովի նախագահը լինում և գործարտեղկոմի անդամներից մեկը։

3. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովներ կազմակերպվում են այն բոլոր ձեռնարկություններում ու հիմնարկություններում, վորտեղ կան գործարտեղկոմներ։ Այստեղ, ուր գործարտեղկոմ չկա, աշխատպաշտպանության աշխատանքը տանում և պլոտիլիտպրը։

4. Հանձնաժողովի կազմը բաղկացած է լինում 3—7 մարդուց, նայած բանվորների թվին և աշխատանքի պայմաններին։ Հանձնաժողովի անդամների թիվը վորոշում և գործարտեղկոմը։

2. ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

5. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովի անելիքների մեջ են մտնում.

ա) Հետևել, վոր ձեռնարկություններն ու հիմնարկությունները կլանքում կիրառեն Աշխատանքի Ու

թենսպիրքը և տշխատանքի պաշտպանության մասին յեղած այն պարտադիր վորոշությունը, վոր հրատարակում են Աշխատողկոմատը և Աշխատանքի բաժինները:

բ) Հետեւել, վոր իրականացվեն աշխատանքի պաշտպանությանը վերաբերող այն բոլոր կետերը, վոր մտնում են հավաքական պարմանագրի մեջ:

դ) Հետեւել, վոր ձեռնարկության վարչությունն իրագործի աշխատանքի, տեխնիկական ու սանիտարական տեսչությունների բոլոր կարգադրությունները:

դ) Հետեւել, վոր նորմալ բանվորական որ կիրառվի (չթույլատրել արտաժամկա աշխատանքներ) և տարեկան արձակուրդների հերթականություն պահպանվի:

յե) Հետեւել, վոր կիրառվեն կանանց և անչափահանների աշխատանքին վերաբերող աշխատանքի պաշտպանության բոլոր կանոնները (կրճատ բանվորական որ, արտաժամկա աշխատանքների արգելում և ալլի):

զ) Հսկել աշխատանքի սանիտարա-առողջապահական պարմաններին ձեռնարկության մեջ. (ողափոխության պարմանները, լույսի և առքության բավարարիները, մաքրությունը):

ե) Հետեւել, վոր ձեռնարկության մեջ աշխատանքը անվտանգ լինի (պայքար դժբախտ դեպքերի դեմ) և բոլոր գժրախտ դեպքերի մասին իր ժամանակին տեղեկություն տրվի միությանն ու աշխատանքի տեսչությանը:

ը) Հետեւել, վոր բանվորներն ու նրանց ընտանիքի անդամները իր ժամանակին բժշկական ամեն տեսակի ոգնություն ստանան (բուժարանալին, հիվանդանոցալին, տնալին, դիսպանսերալին և այլ բժշկություն):

թ) Ոժանդակել իր շրջանի ըուժական հիմնարկությունների ձեռնարկած դիսպանսերացմանը:

Ժ) Հետևել, վոր ձեռնարկության բանվորները պարբերաբ բժշկական քննության լենթարկվեն:

Ի) Մասնակցել բուժական հիմնարկություններին կից գոլություն ունեցող աշխատանքի և կենցաղի առողջացման հանձնաժողովներին:

Լ) Հետևել, վոր տվյալ ձեռնարկությանը կտմ հիմնարկությանը սանատորիաներում ու կուրորտներում հատկացրած բոլոր մահճակալներն ոգտագործվեն իր ժամանակին:

Խ) Բուժարանի հետ միասին հերթ սահմանել հանգստի տներն ուղարկելու համար և հետևել, վոր իր ժամանակին ոգտագործվեն հանգստիտն տներում հատկացրած բոլոր տեղերը:

Ծ) Ոժանդակել բանվորներին՝ ոգտագործելու իրենց սոցապահովագրական իրավունքները (հիվանդության, հղիության, նորածնին կերակրելու և խնամելու և այլ դեպքերում):

Կ) Մասնակցել ապահովագրական գանձարկղին կից պատգամագործական ժողովներին:

Հ) Հետևել, վոր ձեռնարկությունը կամ հիմնարկությունը իր ժամանակին ապգանձարկղ մուծի իրենից հասանելիք տոկոսներն ու մուծումները:

Ճ) Ոժանդակել աշխատանքի տեսչությանն ու Գեհին, լերը նրանք հետազոտում են, թե տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ ինչպես և դրված աշխատանքի պաշտպանության գործը:

Ղ) Մասնակցել այն պայմանագրերի մշակմանը, վորոնք վերաբերում են ձեռնարկության մեջ կառուց-

ման ու վերանորոգման աշխատանքներ կատարելուն, վորոնց նպատակն և բարելավել ձեռնարկության սահիտարատենմիկական պալմանները:

ճ) Հսկել ձեռնարկությանը կից լեզած ընտակարանահանրակացարանների դրությանը, միջոցներ ձեռք տոնել բնակարանալին պալմանները բարելավելու և ձեռնարկության կամ հիմնարկության բանվորների ու ծառալողների պահանջները բավարարելու համար:

մ) Մասնակցել այն նիստերին, խորհրդակցություններին և կոնֆերենցիաններին, վոր հրավիրում են արհեստակցական ու պիտական մարմինները՝ աշխատանքի պաշտպանության, բժշկական ոգնության, սոցիալական ապահովագրության և այլ հարցերի շուրջը:

յ) Կուլտո-կրթական հանձնաժողովի հետ միասին կազմակերպել դասախոսություններ, զրուցներ և եքսկուրսիաններ՝ աշխատանքի պաշտպանության, սանիտարական լուսավորության և սոցիալական ապահովագրության շուրջը:

Յ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԸ

6. Իր առորդա աշխատանքի ընթացքում Աշխատաշտումանության հանձնաժողովը անմիջականորեն լինթարկվում և զործարտեղիոմին, իր գործունեցության ընթացքում լենում և աշխատանքի պաշտպանության մասին լեզած որենսդրությունից ու այդ ասպարիզում լեզած Աշխատակոմատի վորոշումներից և ղեկավարվում և միության և ՀԱՄԿԽ-ի ցուցմունքներով ու հրահանգներով: Հանձնաժողովին իր բոլոր առաջարկություններն ու ցուցմունքները անցել կացնում դորժարտեղիոմի միջոցով:

7. Յերբ Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը զանցառություններ և նկատում աշխատանքի պաշտպանության ասպարիզում և այդ զանցառություններն իր ուժերով վերացնել չի հաջողվում, անմիջապես գործարտեղկոմի վիճոցով այդ մասին տեղեկություն և տալիս ինչպես միությանը, այնպես ել աշխատանքի տեսչին:

8. Աշխատանքի պաշտպանության ասպարիզում ունեցած բոլոր պարտականությունները առավել չափով նպատակահարմար ձևով իրականացնելու նպատակով Աշխատպանության հանձնաժողովն իր տշխատանքը բաժանում և իր անդամների միջև՝ յուրաքանչյուրին պարտավորեցնելով հսկել աշխատանքի պաշտպանության այս կամ այն խնդրին:

9. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը պարբերաբար ժողովներ և ունենում ամիսը յնըլիուանդամից վոչ պակաս: Ժողովները հրավիրվում են բանվորական ժամանակից դուրս չեղած ժամերին: Առանձնապես կարևոր խնդիրներ լուծելիս կարելի յէ հրավիրել վարչության ներկայացուցիչներին, աշխատանքի տեսչին և այլն: Ժողովին որվա և ժամի մասին նախորդք պետք են հայտնել բանվորներին: Հանձնաժողովի վորոշումներն արձանագրվում են և արձանագրությունները վավերացնում են գործարտեղկոմը:

10. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն իր համար ապարատ չի ստեղծում, այլ ոգտվում և գործարտեղկոմի ապարատից:

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

11. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն իր աշխատանքների մասին հաշիվ և տալիս գործար-


տեղկոմին։ Աշխատանքի պաշտպանության աշխատանքների մասին գործարտեղկոմը պարբերաբար զեկուցում է տալիս բանվորների ու ծառայողների պատդամավորական ու ընդհանուր ժողովներին։


12. Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը հաշվետվություն և կազմում իր կատարած աշխատանքի մասին, վորը գործարտեղկոմն ընդհանուր հաշվետվության կարգով ներկայացնում է միության վարչությանը, իսկ պատճենը աշխատանքի տեսչին։

ՀԱՄԿԽ-ի քարտուղար՝ Ս. ԴԱԳԱԴՈՎ Վ.

ՀԱՄԿԽ-ի նախադահության անդամ, կազմբաժնի վարիչ՝ Գ. ՄԵԼԻՆԻՉՅԱՆՍԻՒԻ.

Հաստատված և ՀԱՄԿԽ-ի նախադ. կողմից—«Տրյա» № 91, 23/IV—25 թ.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039670

(164)
А. Рублев

КОМИССИЯ ПО ОХРАНЕ ТРУДА

A —
4545

Госиздат ССР Армении
Эревань, 1930.

ԳԻՒԸ 13 ԿՈՊ. 0^r (2 $\frac{1}{2}$ մ.)